

Մ. ՀԱՅԿԵՆՑ

ԱՆՈՒՐՋ ԳԵՏԻՆ
ԿԱՄՈՒՐՋՆԵՐԸ

Նիւ Ճրգի .
2007

ԱՆՈՒՐՁ ԳԵՏԻՆ ԿԱՄՈՒՐՋՆԵՐԸ

Library of Congress control number: 2007936671

M. Haigentz

THE BRIDGES OF DREAM RIVER

Short stories and more

Copyright © 2007 by M. Haigentz.

All rights reserved. No part of this publication may be reproduced, stored in a retrieval system, or transmitted, in any form or by any means, electronic, mechanical, photocopying, recording, or otherwise, without the prior permission of the author.

ISBN: 9781931834285

Mayreni Publishing

P.O. Box 5881, Monterey, CA 93944

U.S.A.

Printed in the United States of America

Մ. ՀԱՅԿԵՆՑ

ԱՆՈՒՐՁ ԳԵՏԻՆ
ԿԱՄՈՒՐՋՆԵՐԸ

Նիւ Ճրզի
2007

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. ՄԱՍ

Թիւ 8-ը, Թուի՛ւթ	8
Ախտաճանաչում	20
Ծաղկազարդ Արդարութիւն	32
Մոխիրը Տաք է Տակաւին	46
Բարի Երեկոյ, Ստուերներ	60
Յայտնութիւն Հայաստանի	72

Բ. ՄԱՍ

Նորէն Եկեղեցի Երթալ Կ՛ուզեմ	88
Ոգին Ազգին	96

Ա. ՄԱՍ

ፎክ 8-ረ, ፎቢክ'ሀፎ

Սուրեն, հոգի՛ս, տեսա՞ր նոր վզնոցս...

Զիզեթն էր, երեսնամեայ դեղձանիկ մը, որ ապարդիւն թռիչքներէ եւ դայլայլէ յոգնած տասը տարի առաջ ծեքծեքուն թեւաբախումներով հարկադրած էր այդ յաղթահասակ տղան հոգիին պատուհանը բանալու եւ զինք ներս առնելու:

Կանգնած մեծադիր հայելիին առջեւ, Զիզեթ քմիծաղով մը սքանչացած կը դիտէր իր սեւ, թաւշեայ նեղլիկ զգեստին յատակէն շատրուանող սլացիկ գիծերը, աջ ձեռքով սանտրի աճապարեալ մի քանի հարուածներով ամփոփելով թիկնահուպ մագերը, ձախով՝ շոյելով ծործորն ի վար հոսող վզնոցին ոսկի մետալը:

– Հոգի՛ս, տեսա՞ր նոր վզնոցս, ա՛յնքան խնդրած էի քեզմէ ճիշդ ասո՛ր նման...

Սուրեն կը դիտէր ձեռքը հանգչեցուցած դրան եզերքին բարձր տեղ մը, մարմինը պատին, սրունքները դուրսը՝ խաչաձէ: Պէտք կա՞ր հարցնելու վզնոցին ո՛րկէ ըլլալը: Ինք չէր տուած գայն: Ճիշդ պիտի չըլլար այդ գեղեցիկ, նորաւարտ իւղանկարը հիմա պատռել: Ժամանակ չկար: Պէտք է շուտով մեկնէին: Սեղանը շատոնց ապահոված էր, իսկ ուշացումը կը սպառնար գայն ուրիշին շնորհել:

Սուրեն կասկածամիտ մէկը չէր եւ իր անձին իսկ օրինակով վստահ էր Զիզեթի հաւատարմութեան: Ան ոչ մէկ պատճառ ունէր տարբեր տեղ սէր փնտռելու, բայց գիտէր նաեւ որ անխոհեմ քայլի մը շարժառիթը անխոհեմութիւն էր: Անխոհե՞մ քայլ մը առած էր Զիզեթ, թէ ինքզինք խաբած գիտակցութեան հայթայթած արդարացումներով: Հարցը ինքնաբերաբար պիտի լուծուէր մտածեց Սուրեն, բայց ոչ այդ պահուն, եւ

յամբաքայլ մօտեցաւ Զիզէթին, ի՛ր Զիզէթին, անցաւ անոր թիկունքը, հոտուրտաց բուրաստանը եւ դրան շեմին պահիկ մը շրթները հանգչեցուց հոն ուր կաթնաթոյր վիզը ուսին հետ բութ անկիւն մը կազմած էր:

Դեկտեմբերի կիրակի մըն էր: Անսովոր տապը խստադէմ երկնքին դէմ բողոքի բռունցքը իջեցուցած էր գլուխէն կուրծքին ծանրագգեստ այլ թեթեւասոյր բազմութեան, որ խուժած էր ծովեզերեայ գիշերային ակումբէն ներս՝ Նոր Տարուան առթիւ շաբաթներ առաջ ծանուցուած Թուիսթի մրցանքին մասնակցելու:

Սուրեն եւ Զիզէթ քիչ մը ուշացած էին: Խոնամփոփ սեղաններէն բարձրացող գոլորշիին լուրթ շղարշը կամար կապեր էր սրահին կեդրոնական չորս սիւններէն: Անոնց մուտքը վիզեր շարժեց աջէն ձախ եւ ձախէն աջ: Սպասեակը՝ ճերմակ, ցանցառ մազերով, սեւածիր լայն ակնոցը քթին, ձեռքին ոլոր ճաշացուցակը, աւելի իր լիազօրագիրը մատուցող դեսպանի կը նմանէր, երբ խոնարհելով ընդունեց նոր ժամանած գոյգը եւ յարգալիր առաջնորդեց վերապահուած սեղանը, ճիշդ մօտը պարաբեմին:

Յայտագիրը ընթացքի մէջ էր եւ պարախումբը, որ պալէ կը կոչուէր, արդէն քանի մը համար հրամցուցած: Պալէ՛, քաղաքին ամենէն յետին գիշերային ակումբը ամէն օր անխափան կը հրամցնէր գեղարուեստական յայտագիր մը, միշտ թանկագին մասնակցութեամբ անուանի արուեստագիտուհիներո՛ւ, որոնք անպայման սիներմայի, թելեվիժընի եւ թատրոններու աստղ են... սակայն կը նախընտրեն ցածէն փայլիլ, սարդոստայններով զարդարուած նեղ առաստաղներ ունենալով երկնակամար, դիւրաւ սուգուելու համար հոգիներուն մէջ մասնաւորներու, որոնք արուեստասէ՛ր են, լիաբուռն քաջալերողներ, արուեստի առատաձեռն գնորդներ...

Պալէն գեղարուեստական յայտագիրներուն ամենէն փնտռուած համարն է: Խիստ վիրաւորական է ուրիշ անուն մը:

Այս անունով ծանօթ պարախումբերուն յայտագիրները ամեն տեղ, ամեն ատեն նոյնն են: Անոնց կազմերը մէկ խումբէն միւսը գրեթէ չեն փոխուիր, այնքան նման են իրարու: Քանի մը աղջիկներ ամենածածկ շպարին ուժով ստուերագծուած եւ ընկերակցութեամբ թմբուկի եւ դափի որոտին ու մրափող լոյսերու կը նետուին բեմ կատարելու համար անխուսափելի «Պօլերօ»ն առանցք ունենալով տղու նմանող լայնաթիկունք արարած մը:

Սուրէն նոր վերջացուցած էր ընթրիքը երբ մենապարուհին սկսաւ «Մամպօ»ն: Ան յափշտակութեամբ կը դիտէր պարուհին, աչքին տակէն մտահոգ կշռելով Զիգէթին վզնոցը, սփոփուելով որ ան իր մօտ էր, յիշելով եւ մոռնալով, մոռնալ ուզելով եւ վերյիշելով...

– Մա՛մպօ, մա՛մպօ...

Միջին տարիքի «աշխարհահոչակ» երգիչ մըն էր բարձրախօսը ձեռքին:

Սպիտակ, նաշիւագեղ աղջիկը միս-մինակ կը թռչկոտէր բեմին վրայ եւ բումբերէն մինչեւ աչքերը նշացից ան համաչափ կը շարժէր, ինչպէս մեխ մը ոլորտապտոյտ, որ հեզասահ կը մխրճի ու կը քակուի: Ինչէ՛ր ըսես չէր ըլլար այդ պարը դիտողներուն ներսիդին:

Օդը զգալիօրէն ապականած էր: Սուրէն մտածեց շարժման մէջ դնել առաստաղին ագուցուած երեք մեծ հովահարներէն մին փարատելու համար սրահին մէջ թանձրացած ծուխը: Ոտքի ելաւ, քայլ մը առաւ դէպի ետ, սակայն տարօրինակ զգացումով մը անմիջապէս ձեռքը երկարեց մօտակայ հանդերձակալին եւ բաճկոնին գրպանէն հանեց թաշկինակն ու տեղը նստաւ:

Զիգէթին շնորհիւ ինք ալ առարկայ էր սեղանակիցներուն ուշադրութեան եւ նիւթ փսփսուքի, զոնէ ինք այդպէս կը կարծէր շուկայի մարդու զգայարանքով: Իրը պիտի նկատուէր բնագդական պահանջ մը ցրուելու հոգիի՛ն մշուշը: Հակառակ

օրուան տապին եւ ճնշիչ մթնոլորտին, Դեկտեմբեր էր, ձմեռ, իսկ հովահարը ամա՛ռը կը բանի:

Վզնոցը տեղն էր: Ջիզէթի կուրծքը որքան կը յիշեցնէր գոհարավաճառներու լուսաշող ցուցափեղկերուն մէջ խնամքով շարուած տուփերուն սեւ թաւիշէ, կիսաբոլորակ խորքը: Ոսկի, փաղփուռ մետալը մերթ Եւրթ կը սարսռար Ջիզէթի մատներուն գգուանքին տակ: Եթէ ան պարզէն էր մեղքին, ինչպէ՛ս անոր ծանրութեան կը տոկար Ջիզէթ, երբ միայն կասկածը դարանակալ կը սպասէր ժանգոտելու նախակրթարանէն թերաւարտ Սուրենի պայծառ հոգին:

Ջիզէթ տասը տարի իրե՛ն համար գեղգեղած էր, ի՛ր վանդակին մէջ, երախտագիտօրէն, շնորհալիօրէն: Ինք էր որ անսահման սիրով մաքրած էր անոր տոտիկները, երբ առաջին անգամ դաշտէն գալով իր պատուհանէն ներս մտաւ... Ջիզէթ իրն էր: Իր տան թագուհին ըրած էր զինք տասը տարի: Արդեօք ա՞ն ալ մաս կը կազմէր սէրը, բարիքն ու ազնուութիւնը ատեն մը վերջ չհանդուրժողներուն: Ջիզէթ ոսկեղէնի պակաս չունէր: Սուրեն անոր բոլոր գոհարեղէնները գնած էր նշանաւոր Պելլինիէն: Ի՞նչ է վզնոց մը: Վզնոց մը... եթէ ինք չէր գնած, Ջիզէթ ալ չէր կրնար գնած ըլլալ: Չէր արժէր այդ մասին խորհիլ ինչպէս Ջիզէթ ալ արդարացիօրէն աւելորդ նկատած էր բացատրութիւն մը տալ հայելիին առջեւ երբ տունն էին:

Ժամանակը հալած էր: Գեղարուեստական յայտագիրն ու քառորդ ժամուան դադարը վերջացած էին:

– Թուի՛սթ, թուի՛սթ... երիտասարդ խօսնակը ընդհանուր ոգեւորութեան մէջ մրցանքը բացուած յայտարարեց, յանուն ներկաներուն գնահատանքի քանի մը խօսք ըրաւ շա՛տ սիրելի պարոն կազմակերպիչին, որ այդ պահուն լայն ժպիտը դէմքին նուագախումբին մօտ աջ-ձախ ներկաներուն ցոյց կուտար առաջին պարզելը՝ հնչուն ոսկեղրամ մը:

– Եւ հիմա 9 գոյգեր պիտի մրցին միանգամայն ապա մէկ-մէկ պարելու համար ձեր ներկայութեան: Դո՛ւք էք իրաւարարը

եւ համաձայն ձե՛ր գնահատանքին պիտի պարզեւատրուի լաւագոյն...

Իսօսքը բերանն էր երբ գոյգերը խանդավառ շարժումներով պարաբեմ վազեցին:

Նուագախումբը տկար էր քանի որ մաու-մաուներու գոռում-գոչումը այդքան ալ հարազատ կերպով չէր կեղծեր: Բարեբախտաբար ծափերուն իւլացնող կշռոյթը օգնութեան հասաւ պարող ութը գոյգերուն: Տղաքը քսանէն վար թրթուրներ էին, բաճկոնները կարճ, յետոյքէն վեր, տաբատները՝ հակիթին կճեպին պէս միսին փակած:

Սուրեն կը խնդար, կը խնդա՛ր, խնդալո՛ւ համար եկած էր արդէն: Եւ ո՞վ չի խնդար դիտելով Թուխթը, այս նոր պարը, որ մօտէն կը յիշեցնէ Արեւելքի փողոցներուն մէջ ոտանիւի վրայ դանակ եւ մկրատ յեսանող ծերուկներուն սրունքի ելեւէջը կամ դաշտին անկիւնը, ամայի տեղ մը, իշուն եւ ձիուն սիրաբանութիւնը... ապագայ ջորիի մը համար:

Ներկաներուն մեծ մասը աթոռներուն եւ սեղաններուն վրայ բարձրացած էր դիտելու համար: Զիզեթ, մոռցած ամուսինը, կ'որսար պարողներուն մէն մի շարժումը եւ սեղանին տակէն կը փորձէր կիրարկել մոլտալով նուագին կշռոյթը գլխու ետ-առաջ շարժումներով:

– Թուխթ ըկէ՛ն...

Եղանակները շղթայուած էին եւ կը շարունակուէին անընդմեջ: Ո՛վ կը մտածէր ականջ դնել խեղճ տղոց խորդացող կուրծքերուն կամ խնայել աղջիկներուն, որոնց դէմքը իրենց ներքնաշապիկին խխում ըլլալը կ'աղաղակէր: Թող պարե՛ն, պարե՛ն, այդպէս կ'ուզէ ամբոխը, աստոր համար վճարած է: Իսկ հիմա դիտող ըլլալէ զատ վերջին պահուն, մրցանքին սկիզբը, յայտնուեցաւ որ դատող է, իրաւաբարի իրաւունքն ալ գնած:

Նուագախումբը դադրեցուց միապաղաղ կշռոյթները: Տղաքը իրենց բազուկին մէկական թիւ ունէին: Պարողները երբ քու-

լիս վերադարձան, փոխան սկզբնապես յայտարարուած 9-ի, ուրը գոյգ էին: Ներկաները այս առաջին կատարումով տեսած էին պարողները խմբովին եւ արդէն մտովի մասամբ ըրած իրենց ընտրութիւնը: Այդ կը վկայէր սուլոցներու մերթ մեղմ մերթ ուժգին ու ծափախառն յանկերգը զանազան թիւերու կանչով:

Պաշտօնական ընտրութիւնը տեղի պիտի ունենար գոյգերուն առանձնակի պարին աւարտին:

– Օ՛, օ՛, օ՛ Թուիսթ **ըկէն...**

Սկսաւ մրցանքին աւարտական եւ վճռական բաժինը:

Թիւ 1 գոյգը առաջնութեան արժանի հաւանական թեկնա-ծուն է: Աղջիկ-տղայ համաչափ շարժումներով միալար կ'իջնեն մինչեւ տախտակամածը պարաբեմին ապա կրկին սրունքով անտեսանելի անիւր դարձնելու համար...

Իրարու յաջորդեցին թիւ 2-ը եւ թիւ 3-ը:

Ահա թիւ 4-ը: Այս գոյգն ալ պարգեւատրուելու արժանի է: Աղջկան խօլական կոնքապարը եւ թիկունքէն տղուն սրունքին վարպետ պտուտակումը ծփացող փէշին ընդմէջէն սրահը թնդացուցին ծափերով եւ սուլոցներով:

Սուրեն նոր անդրադարձաւ որ այդ գիշեր պարասրահը կը կառավարուէր ժողովրդային կամքի գերիշխանութեամբ: Իւրաքանչիւր գոյգ ճիգ կը թափէր յատուկ ոճ մը ցուցադրելու: Այժմ թիւ 7 էր պարաբեմին վրայ:

Տղայ մը, սեւ կոչուելու չափ թուի, որ բազուկին կը կրէր 8 թիւը ցոյց տուող օղակը, **պիւֆէին** կողմէն գալով, աճապարեալ, օձապտոյտ քայլերով անցաւ սեղաններուն մէջէն, աչքերը պտըտցնելով չորս դին, երբեմն կանգնելով ներքանին վրայ ճիտը ցցած: Մէ՞կը կը փնտռէր. թերեւս: Երիտասարդները կը ճանչնային զինք: Իրենց ծանօթ որբ տղան էր, որ գիտէր զուար-ճանալ եւ չզրկուիլ հաճոյքէ շրջելով ծաղարանէ ծաղարան, պարասրահէ պարասրահ, ձեռքերը գրպանը:

Սպասեակները կը հանդուրժէին անոր դեգերումներուն:

Գիտէին որ ան կ'ապրէր հիւանդ քրոջ հետ: Վարժ պարող մըն էր, ինքնուսոյց եւ ձեւապաշտ, եթէ միայն յաջողէր ընկերուհի մը գտնել, որովհետեւ անոր հետ կը յօժարէին պարել միայն այն կիները, որոնք մնայուն յաճախորդ են ծաղարաններուն, ունին իրենց յատուկ անկիւնը եւ կը սիրեն պարել ցուցադրուելու ապա հաւանական անցորդի մը հետ թեւանցիկ մեկնելու համար: Յաճախ կը պատահէր որ անոնք կէս ժամ ետք վերադառնային նոյն արարը անխոնջ կրկնելու ուրիշի մը հետ:

Հազիւ թիւ 7 գոյգը վերջացուցած էր իր պարը, խօսնակը յայտարարեց.

– Եւ այժմ թիւ 9 գոյգը, մրցանքին վերջին... Չկրցաւ ամբողջացնել:

Ներկաները մէկ մարդու պէս ոտքի կանգնած բռնցքով կը թակէին սեղանները աղաղակելով.

– Թիւ 8-ը, թիւ 8-ը...

– Թիւ 8-ը, Թուի'սթ

– Թիւ 8-ը

– Թիւ...

Խօսնակը շփոթած պէտք տեսաւ հանդարտեցնելու զայրացած բազմութիւնը:

– Թիւ 8-ը... **նօ փարթնրը...**

Աղմուկը դեռ չէր ընկալած նետուած ոսկորը երբ Զիզէթ կանգնեցաւ պարաբեմին ճիշդ մէջտեղը, հայեացքը պտըտցուց ժողովուրդին վրայ, թեթեւ մը խոնարհեցաւ կարծես ըսել ուզելու համար- ահա', ե՛ս եմ կամաւորը: Անոր երեւումը որոտընդոստ ծափերով ողջունուեցաւ: Տղան նստած նուագախումբին պատուանդանին ծայրը ձեռքերը կը շփէր արագօրէն...: Բացուած էր իր սեւ թուշերուն վարագոյրը եւ աստամներուն սպիտակը իր երջանկութիւնը կը վկայէր:

– **Գամ օն, Թուիսթ ըկէն...**

Դաշտը իրենցն էր: Ինչպէս միջնադարուն կողմերու ներկայացուցիչներու մենամարտով կը վճռուէր խնդրի մը

լուծումը, կողմնակիցներու հետաքրքիր բազմութեան շրջանակին մէջ թիւ 8-ը գոյգը նետուած էր պարաբեմ: Զիզէթ դէն շարտեց կօշիկները կարենալ հետեւելու համար իր ճարտար ընկերակցին քայլերուն: Ուրուագծային մարմնին օրօրուն թեքումը աջ եւ ձախ ու հոլանի, ալապաստրէ սրտաձեւ կոնակին վրայ շողացող լոյսերուն բեկումը փոթորիկ յառաջացուցին սեղաններուն ներքեւ եւ վերեւ:

Զիզէթի անփոյթ կուրծքին վրայ ճօճող վզնոցը իւրաքանչիւր շարժումին կը մրճահարէր գլուխը Սուրենի: Եթէ ոտքի ելլէր, պէտք է կնոջ թեւէն քաշելով պարասրահէն դուրս խոյանային, բայց Սուրեն իր սովորական ծանրախոհութեամբ երեւոյթները փրկող անգուգական ժպիտը դողացուց դէմքին վրայ:

Պարը վերջացաւ: Սրահը փակ կաթսայ մըն էր, ուր սուլող եւ ծափող ժողովուրդը կ'ետար պայթելու չափ:

Թիւ 9 գոյգը նահանջեց իր կամքով...:

Խօսնակը գոռաց.

– Թիւ 8-ը յաղթակա՞ն:

Ներկաները իրենց կամքը իրագործուած տեսնելով կրկին դողդացուցին սրահը:

Զիզէթ տղուն հետ պարաբեմին մէջտեղն էր, լուսանկարիչին գործիքին սեւեռուն: Կազմակերպիչը հանդիսատրապէս մօտեցաւ: Տղան, երջանիկ, ձեռքը երկարեց ստանալու համար առաջին պարգևը, բայց Զիզէթ կոպտօրէն խլեց ոսկեղրամը: Ակնթարթի մը մէջ տղուն սպիտակ ատամները խաւարեցան: Տղան գամուած մնաց հոն նշանակութիւն չունեցող դիմախաղերով նման այն սկսնակ դերասանին, որ չի գիտեր ի՛նչ ընել երբ ըսելիք չունի:

Սուրեն չէր կրնար երեւակայել իր կինը այդ վիճակին մէջ: Վզնոցը միտքը եկաւ: Ուրեմն ինքզինք խաբած էր տա՛ւը տարի...: Հիմա ամէնուն առջե՞ւ... Ոսկեղրամի՞ մը համար... Բայց ին՞դը մնացած էր շորթելիք... չտուածի՞ն համար:

Զիզէթ կազմակերպիչին ձեռքը թօթուելէ ետք քանի մը քայլ առած էր, բայց իր սեղանը չհասած ետ դարձաւ, քալեց դէպի պարաբեմը եւ ոսկեղրամը սահեցուց տղուն գրպանը: Տուչութեան ամբողջ արարողութիւնը սկիզբէն մինչեւ վերջ տեւած էր մէկ վայրկեանէն պակաս:

Սրահը անգամ մը եւս փոթորկեցաւ հիասքանչ կանչերով:

Սուրէն եւ Զիզէթ երկար չմնացին: Դուրսը մասամբ զովացած օդը դեռ չէր ձեռքած մշուշը: Հազիւ ինքնաշարժին մէջ տեղաւորուած էին երբ մատի հարուածներ լսեցին հովարգելին: Զիզէթի պարընկեր թուխ տղան էր: Սուրէն շուարած բացաւ պատուհանը:– «Բառ մը միայն... շուտ մեկնեցաք... ներեցէք...», թոթովեց տղան շնչատ՝ գլուխը մօտեցնելով բաց պատուհանին, «չէի կրնար չըսել... տիկին, դուք աղօթքիս պատասխանն էիք... թերեւս կարենամ կեանք մը փրկել... Երախտապարտ եմ»: Եւ ձուլուեցաւ մշուշին մէջ:

Այր եւ կին պահ մը իրարու նայեցան: Սուրէն փորձեց հասկնալ պատահածը: Ի՞նչ կրնար ընել թանկարժէք մետաղի կտորը անբուժելիին: Անբուժելի՞, ո՞վ գիտէ, բայց կ'արժէր որ տղան յուսար: Զիզէթ, անհոգ, աչքերը ուղղեց գլխավերեւի հայելիին եւ մատներու արագ շարժումներով մազերը յարդարելէ ետք, կօշիկները հանեց, գլուխը դրաւ Սուրէնի ուսին եւ սրունքները երկարեց դրան կողմը:

Խառնիխտուն մտածումներով Սուրէն ինքնաշարժը կը վարէր ծայրայեղ զգուշութեամբ երբ ականջին տակ լսեց Զիզէթին մրմունջը խառնուած անոր անշփոթելի շունչին– Հոգիս, վաղը վզնոցը Պելլինիին տար... այս գիշերուան զգեստիս համար փոխ առած էի:

Սուրէն գիտէր որ թովռան Զիզէթը մեղքի մը գինը ցուցադրելու չափ անմիտ մը չէր, բայց յանդուգն աղջիկ մըն էր եւ պիտի չվարանէր ըսելու՝ «այս ա՛յս է, ըրէ՛ ինչ որ ուզես...»: Սակայն հիմա որ լսած էր հոգին խաղաղեցնող խօսքը, չգիտցաւ ի՛նչ ըսել: Ճամբուն պայմանները աննպաստ էին պահ մը կանգ

առնելու համար: Բնագդաբար դեկը սեղմեց զոյգ ձեռքերով:
Աչքերը լեցունեցան: Քանի մը ժամուան մէջ զգացումներու
այդքան վերիվայրում շատ էր իրեն համար:

Դեկտեմբեր 1964

Լոս Անճելըս, Գալիֆ.

ԱԽՏԱՃԱՆԱԶՈՒՄ

ԼՎՈՒՍԻՆԱ հիւանդներու շատ գեշ տեսակին կը պատկանի. հիւանդութիւն հրաւիրող ամէն ինչ կ'ընէ, բայց կը սոսկայ հիւանդանալէ, իսկ երբ հիւանդանայ, ինծի հետ կը կռուի որպէսզի բժիշկ չտեսնէ: Անցեալ շաբթուան անտանելի մէջքի ցաւը բժիշկին դէմ թշնամութիւնը մոռցուց:

Երկուշաբթի կէսօր ինք ու ես նստած ենք մօտակայ Էնկլ հիւանդանոցին ախտաքննութեան բաժնին սպասման սրահը: Ատենը անգամ մը կապոյտ գոգնոցով աղջիկ մը կ'երեւի դրան առջեւ, անուն մը կը կանչէ եւ բազմութեան մէջէն հիւանդը կը հետեւի անոր դէպի նկարչատուն:

Բոլորը հոս են կերպով մը նկարուելու համար. իրենք բնաւ պիտի չտեսնեն իրենց նկարուած մասին կամ մասերուն պատկերները: Բժիշկ մը պիտի «կարդայ» զանոնք եւ տեսածը հաղորդէ հիւանդին բժիշկին:

– Վիվիանա Օրթեկա Կոնսալվօ տէ Մայօ:

Անուշիկ դէմքով, լեցունկեկ, քառասուննոց կին մը ոտքի ելաւ եւ կաղալէն հետեւեցաւ կապոյտ գոգնոցով աղջկան:

Ո՞վ գիտէ ի՛նչ դժուարութիւն ունի Վիվիանան: Քովը նստող տարիքոտ կիներ ավիին մէջ ոլորած ճերմակ թուղթով թաց աչքերը սրբեց:

Թերեւս մայրն էր կամ կետուրը: Աստուած Վիվիանային հետ ըլլայ:

Կը դիտեմ նստողներուն դէմքն ու շարժումները: Ծանօթ չկայ. հայ ալ չկայ անպայման, քանի որ հայերէն խօսող չեմ լսեր:

– Երկար եղաւ, չըլլալիք է, գործ ունիմ, մա՛յրը... Ինչո՞ւ չկրցար ուրիշ օր ընտրել: Չե՞ս գիտեր որ շաբաթավերջի

գործերը Երկուշաբթի օրուան գլխուն կը պայթին:

Ամուսինիս անհամբերութեան առաջին պոռթկումը չլսել կը ձեռացնեմ յուսալով որ իր կարգը չ'ուշանար: Տրամաբանականօրէն ի վերջոյ բոլոր այս հիւանդները նկարչական նոյն գործիքով պիտի չնկարուին եւ հետեւաբար ժամանման հերթի կամ **Ֆրրսթ գամ Ֆրրսթ սըրվի** հարց չկայ: Բայց մտքով կը պատրաստուիմ երկրորդ պոռթկումը դիմագրաւելու, առանց աչքս հեռացնելու դռնէն:

Ահա կապոյտ գոգնոցով աղջիկը, յոյսս, ո՛չ... փրկիչս: Ի՛նչ կ'ըլլայ, մէջ մը արտասանէր Ասլան Գրիգորեան անունը ինչ ձեւով որ կ'ուզէր, միայն արտասանէր, մենք պիտի հասկնայինք առաջին գիրին առաջին հնչիւնէն:

– Յետուս Ռիքարտօ Փայէյա:

Շարժող չկայ: Ձգած գացա՞ծ է արդեօք: Երկրորդ կոչ մը, այս անգամ ուժգին: Կապոյտ գոգնոցով աղջիկը բարկանալ գիտէր:

– Յետ՛ւս, Յետ՛ւս:

Դալուկ դէմքով երիտասարդը, որ գլուխը աջ ուսին նետած կը խոկար, աչքերը բացաւ, չորս կողմը նայեցաւ տարբեր մոլորակէ մը ինկածի պէս եւ օրօրուէլէն ուղղուեցաւ դէպի միջանցք:

– Քալէ տուն երթանք, օրս մեռաւ, մա՛յրը...

Ուշադրութիւնը շեղեցնելու համար պայուսակէս թերթը հանելով ցոյց կուտամ ծանօթներու նկարները:

– Գրի՛, ըսի, իր սիրած փաղաքշական անունով, կարդա՛: Հայաստանի Երեւաններու Օգնութեան Հիմնադրամը անցեալ շաբաթ աւելի քան երկու միլիոն տոլար գոյացուցեր է: Ուրախալի է, չէ՞:

Բարեբախտաբար կապոյտ գոգնոցով աղջկան կանչը այս անգամ ինայեց անծանօթին անծանօթ մայրը:

– Էյս... Էյզ... Էյզլէն Գրիգորեէն:

Ամուսինս տեղէն ցատկեց, ըստ իր սովորութեան փառք

տալով Աստուծոյ: Զարմանալի է. ամենէն աննշան նեղութեան յաղթահարումը ինչքան գոհունակութիւն կը պատճառէ մարդ կոչուած տերեւին: Սրահին մէջ սպասման սրտնեղութիւնը վերջ գտած էր. պիտի սկսէր միւս սպասումը, քանի մը օր քուն փախցնողը... Ի՞նչ պիտի պատմէին պատկերները:

– Իմ ալ կնիկս տակաւին ներսն է...

Հապա հայ չկա՛ր: Մեր դիմացի շարքին աջ կողմէն չորրորդ աթոռին վրայ նստած ճաղատ, ցցուն փորով մարդն է, որ հոն էր երբ ներս մտած էինք: Շատ գէշ զգացի որ հայ մը լսած էր ամուսինիս անշնորհք արշաւանքները անձանօթին անձանօթ խեղճ մօր վրայ: Ժպիտս քաջալերեց զինք որ տեղէն ելլէ եւ գրաւէ կողքիս աթոռը:

– Կինդ ի՞նչ ունի, հարցուցի բան մը ըսած ըլլալու համար, կարծես հին ծանօթներ ըլլայինք:

– Չեմ գիտեր: Ստամո՞քսն է՛, սի՞րտն է՛, ցաւ ունի: Չեմ գիտեր, յայտնի չէ...: Երկրորդ կնիկս է, ինձմէ բաւական պզտիկ, աղէկ աղջիկ է: Երեք տարու զաւակ մը ունինք: Առաջին կնիկս ալ լաւ էր: 30 տարի միասին ապրեցանք, բայց մայրը ւարեց ամէն բան: Ատ կնիկը 10 տարի մեզի հետ ապրեցաւ: Ամէն բանի կը խառնուէր: Ա՛լ չկրցայ դիմանալ եւ օր մըն ալ կնիկիս վերջնագիր տուի—կա՛մ ես, կա՛մ մամադ: 30 տարուան կնիկս մայրը ընտրեց. երեւակայէ՛: Մա՛յրը...:

Ինչ որ է, դատարան ինկանք: Ես փաստաբան չվարձեցի: Ամէն մարդ ինծի ըսաւ որ խենթ եմ: Դատարանն ալ պահանջեց որ փաստաբան մը ունենամ: Ըսի, Տէր դատաւոր, ամէն յարգանքներովս, ես փաստաբան-մաստաբանի պէտք չունիմ: 30 տարուան կնիկս է, թող առնէ ինչ որ ունիմ: 30 տարի հետը ապրելէ ետք փողոց չպիտի ձգեմ **եա**:

Մտքիս ծայրէն չէր անցներ որ սովորական հարցում մը մէկ շունչով սիրտը պարպել պիտի տար: Թերեւս բարեկամ չունէր, մտածեցի, կամ ալ անոնցմէ էր որ դիմացը ելլողին

նոյն բանը կը պատմեն: Բայց շատ դժուար կացութեան մը մէջ վեհ կեցուածքը չէի կրնար անարձագանգ թողուլ:

– Շիտակ վերաբերում ունեցեր ես, ըսի:

Մարդը աչքերը յառեց առաստաղին, առանձնացաւ ինք իրեն հետ՝ մակոյկով վերադառնալէ ետք ցաւի մօտիկ կողմէն:

– Ուրիշ բան չէի կրնար ընել, խօսեցաւ քթին տակէն հազիւ լսելի ձայնով: Խիղճ ըսուած բան մը կայ:

Կապոյտ գոգնոցով աղջիկը սկսած էր յայտնուիլ աւելի յաճախ: Նկարուելու գործողութիւնը աւարտած հիւանդներէն անոնք որ սպասող ունէին, սրահ կուգային: Տարեց կիներ ուրախացաւ Վիվիանան տեսնելով. անոնք միասին մեկնեցան:

– Ես հարուստ չեմ, բայց հանգիստ կ'ապրինք, այս անգամ հաստատ ձայնը լսելի դարձուց մարդը: Դուն ճրգեցի ես եւ անպայման գիտես Գլիֆսայտ Փարքի **քոն փուէնը**: Ճիշդ հոնտեղէն տուն մը գնեցի. քանի մը շաբաթ ետք կնիկիս հիւանդութիւնը մէջտեղ ելաւ: Այստեղ բժիշկները, հիւանդանոցներն ու դեղարանները մուխդ կը մարեն: Անոնց ձեռքը ինկողը կը մաքրուի:

Տէր Ղուկասը յանձնարարեց որ կնիկս Հայաստան տանիմ դարմանումի համար: «Հիմա ազատ-անկախ է, ա'մ-մէ'ն ինչ էժան է», ըսաւ: Առիթէ՞ն պիտի օգտուէի... **նօ ուէյ**: Ժողովուրդին կէսը անգործ... 15 տարի է...

– Նոր երկիր է, ի՞նչ ընենք:

Նպատակս կասեցնել էր մարդուն թափը, որովհետեւ ձայնին բարձրացումը նկատելի դարձած էր տակաւ պարպուող սրահին մէջ: Հաւանաբար ամուսինս քիչ մըն ալ պիտի ուշանար, բայց կ'ակնկալէի որ խօսակիցիս կիներ եկած ըլլար մինչեւ հիմա: Կ'ուզէի զինք տեսնել, հետը խօսիլ, նայիլ թէ երկուքը յարմա՞ր էին իրարու...: Ազգայինճիւղիւնն ու լեզուանիութիւնը, խորհեցայ, պատճառներ կրնային եղած

ըլլալ արտաքինով ոչ գրաւիչ, տարիքով իրմէ մեծ այս մարդուն հետ ամուսնութիւն կնքելու: Ես նկարագրով հետաքրքիր մէկը չեմ, բայց երբեմն...

– Նոր երկիր չէ, բարկացաւ ոտքի ելլելով, դէմքը ինծի, կոնակը՝ դրան: Քիւրտերը, քիւրտե՛րը Իրաքի հիւսիսը՝ Ինքնավար Քիւրտիստանը դրախտի վերածեցին 10 տարուան մէջ: Երեւակայե՛՛: Քեզի տամ մե՛ր հաշուեկշիռը – 70 տարի ծանր զոհողութիւններ, մշակոյթի, գիտութեան եւ ճարտարարուեստի զոհար երկիր մը իր բնական վիճակին վերադարձած անկախութեան 5րդ տարին, կիսով պարպուած 10րդ տարին, **քաֆէճի** եւ **հոթելճի** դարձած 15րդ տարին:

Անկախութեան 15 տարիներու պատմութեան լուսաւոր էջը Ղարաբաղն էր իրեն համար: Հող շահած էինք, Հայաստանը մեծցած էր, պաշտպանութիւնը զօրացած: Էջմիածնի բազմացող միաբանութիւնը աստառը ցոյց պիտի տար քանի մը տարիէն: Մնացեալը սիրտը բզքտեր էր: Չայնը կը դողար. ճակատը կարմրած էր: Եթէ հիւանդանոց չըլլայինք, հաւանաբար բռնուցքը պատին մխրճէր: Մարդը քաղաքացիական ներքին կռիւ մը կը մղէր: Ինչ մեղքս պահեմ, միտքս դրամի գնաց: Խորհեցայ որ տուժած կամ... այրած սփիւռքահայ **ինվեսթոր** մը կրնայ եղած ըլլալ, բայց չհամարձակեցայ մտածումս յայտնելու:

– Մեր երկիրն է, պէտք է օգնենք ամէն կերպով: Համաձայն չե՞ս:

Համաձայնութիւնը զլացաւ: Ատեն մը լուռ մնաց: Զգացի որ պատասխանը պիտի ըլլար «այո-ոչ»ի մէջտեղ բան մը: Լռութիւնը հետաքրքրութիւնս լարեց: Կ'ուզէի գիտնալ այդ բանը:

– Ամէն օգնութիւն **հեղալ** է, բայց օգնութիւնը անօգուտ է երբ կը լեցնէ գողին գրպանը, պատգամեց վերստին գրաւելով աթոռը: Դուն զիս չես ճանչնար: Ես անոնցմէ եմ որ եկեղեցիին նստարաններուն տակ եւ խորանին ետեւ **պոլշեիկ**

կը փնտռէին: Դպրոցը, պատուանդանին առջեւ կանգնած ուսուցիչին մէջ **պոլշեիկ** կը տեսնէին: Ֆութպոլի դաշտին վրայ մեր խումբին պարտութեան պատասխանատուն պոլշեիկ **րէֆըրին** էր: Մեր առաջին ուխտը հայրենիքի համար մեռնիլ էր, երկրորդը՝ **պոլշեիկ** մեռցնել կամ գոնէ **պոլշեիկի** մօրուք ածիլել: Է՛յ, **չօճուխ** էինք: Մեր դաստիարակչական յանձնախումբին ուսուցիչներն ալ **չօճուխ** էին:

Լռեց: Եզրակացութենէն գուշակեցի որ աւարտած էր ինքնամատոյց ինքնակենսագրականին այս հատուածը: Առիթէն օգտուելով փորձեցի վստահեցնել, առանց այնքան ալ վստահ ըլլալու, որ հասունցած ժողովուրդ մըն ենք, ազատ-անկախ երկիր մը ունինք, տխուր ժամանակները անցած են եւ ա՛լ չեն վերադառնար քանի որ պատճառը, իր բառով պոլշեիկմը, անցած-գացած է:

Հակադարձութիւնը արագ եղաւ:

– Ո՛չ, ըսաւ, պոլշեիկմ-մոլշեիկմ **մահանա** էր: Երբ դուն քեզ կը համոզես որ Հայաստանի գահը քուկդ է, քեզի կը պատկանի, դո՛ւն ես միակ արժանաւորը, թշնամի ստեղծելն ու քեզի հետեւող ոչխար գտնելը շատ դիւրին է: Հայ ժողովուրդը 600 տարի ազատ-անկախ Հայաստան երազեր է եղեր եւ վերջապէ՛ս գտեր...

Հայ ժողովուրդը ե՞րբ այդ երազը տեսեր էր, ինք չէր գիտեր եւ չէր ուզեր գիտնալ, որովհետեւ ըսի-ըսաւը շատ էր: Կը ցաւեր որ **ֆալճիներու** մեկնութեամբ երազները զառանցանք կը թուէին: Ինք մեծ յարգանքով կը յիշէր խելացի եւ անձնուէր հայերը, որոնք կէսով ջարդուած եւ իր մեռելները թաղելու անկարող ազգին մահամերձ հատուածին կեա՛նք տուէր էին, **էնթերնասիոնալիսթ** բռնապետներուն քթին տակ յաջողեր էին պահել անոր տունը, Հայաստանը, եւ ո՛չ միայն պահել այլ շէնցնել՝ 70 տարի Մոսկուան կրթելով, կը-թեւ-լով:

Իրեն համար իրագործուածին անչափելի մեծութիւնը կը հաստատուէր այն փաստով որ եթէ Լենին մը իր Ժերգինսքի-

ներով կամ Սթալին մը իր Եակոտաներով, Եծովներով եւ Պերիաներով որոշէր ջնջել Հայկական Հանրապետութիւնը, աշխարհի վրայ ո՛չ մէկ ոյժ կրնար արգիլել, աշխարհի մեծերէն ո՛չ մէկը նոյնիսկ ճկոյթը պիտի շարժէր: Ազատ-անկախը փնտռելու համար Տէր Ղուկասը Թիֆլիս կամ Պաքու պիտի երթար թերեւս ալ... Անքարա:

– Չե՞ս կարծեր, հարցուց աւելի քաղաքավարական նկատումով քան թէ իրապէս կարծիքս առնելու համար:

– Այդ ժամանակներու դժուարութիւնները, կէս-գիշերային անհետացումները, **Կուլակի** ճամբարները... ինծի եւ քեզի համար պատմութիւն են, զոհերուն զաւակները, թոռները...

– **Օքէ՛յ**, ըսաւ, համաձայն եմ, չմոռնա՛նք: Պատմութիւնը լեցուն է մոռցուած, մոռցուելիք եւ չմոռցուելիք բաներով: Բայց արթուն պահելու համար **մէթ** պէտք չէ հայթայթուի ժողովուրդին: Անոր արդէն կարճ յիշողութիւնը պէտք չէ ճմռթքուի:

Գիտէի որ **մէթը** քիմիական բաղադրութիւն մըն է, պահ մը արթնութիւն կուտայ, յետոյ կը յիմարացնէ եւ կրնայ մեռցնել, բայց չկրցայ անմիջապէս կապ մը տեսնել հայ կեանքին հետ:

– Էականը հայրենիք չկորսնցնելն է, շարունակեց, հայրենիքի գոյութի՛ւնը: 1915-էն աւելի՝ չմոռնալ 1915-ի դա՛սը: Դժուարութիւններ եւ դժբախտութիւններ կան ու կա՛ն: Ուրիշ բան չըսեմ: Գնա՛ ազատ-անկախ հայ աղջիկներուն հարցուր: Գիտես, չե՞, խեղճերը կտոր մը հացի համար եւրոպական «արժեքները» շալկած վազելով ը՛ր՛... ինչպե՞ս ըսեմ ը՛... վրան կը լարեն նախկին ուղտապաններու եւ սայլապաններու: «Հազար նազով եար»ը երիկ պէտք է կերակրէ... եթէ քովն է: Կը հասկնա՞ս:

Ինք խաբուելէն յոգնած էր, յո՛գ-նա՛ծ: Ա՛լ պիտի չխաբուէր եւ պիտի չխաբէր ինքզինք: Ըսելիք չունեցող հոգեւորականն

ու մտաւորականը «անաստուած համայնավարութիւն» կը քարկոծէր: Աստուած ինչ գործ ունէր **Էքոնոմիքայի** եւ **փոլիթիքայի** հետ: Աստուած կա՞ր Տեմոքրաթներուն, Ռեփիւպլիքէններուն, Աշխատաւորականներուն, գափիթալիսթներուն կամ սոսիալիսթներուն մէջ:

– Իմ գիտցածս այն է, ըսաւ, որ Աստուած իր ամբողջ փառքով նստած է Սատտամ Հիւսէյնի երկիրը...: Ներկայ է Իրաքի բոլոր կուսակցութիւններուն մէջ: Եւ ամէն օր գունդ առ գունդ իրաքցիներ կը դիմաւորէ **Ճէննէթին** մէջ: **Ալլահու Աքպար:**

– Բայց դրկողը **Ընքըլ** Սէմն է...

Մէկէն խնդուքս բռնեց: Զարմացած ինծի կը նայէր: Անշուշտ ո՛չ իր վրայ կը խնդայի, ոչ ալ Ալլահին: Ես ի՛մ վրաս կը խնդայի, որովհետեւ բառերս ինծի յիշեցուցած էին մեր հին պատուական դրացին, սափրիչ Սէմ Փիթըրսընը, Սեֆաստիոյ Ալիս գիւղէն Սամուէլ Պետրոսեանը, որ առիթ չէր փախցներ միջազգային ամէն խնդրի մէջ **Ընքըլին** մատը տեսնելու:

Տարօրինակ էր որ հարցերուն քաջածանօթ, զօրաւոր համոզումներ ունեցող այս պատրաստաբան մարդը կարծիք չունէր Իրաքի պատերազմին մասին: Ուսերը թօթուեց: Ճորճ Պուշ հարկաւ բան մը գիտէր: Բայց առօրեայ անվերջանալի ռմբահարումները զինք մղած էին բաղդատելու Մուհամմետը եւ Յիսուսը: Երկուքն ալ անձնուրացութիւն կը պահանջէին:

– Տարբերութիւնը կիրարկումին մէջ է, ըսաւ: Մէկուն հետեւորդը պատրաստ է մարմինը օդը հանելու, միւսինը՝ ինքնութիւնը օդին նետելու...

Ինք հայ քրիստոնեայ էր, դէմ էր ամերիկեան քրիստոնէութեան, որ անկողինը փռած էր փոփոխութեան վարդապետութեան տակ:

– Տունդ հանգիստ նստած՝ վերէն վարէն, աջէն ձախէն չէ՛յնձ, չէ՛յնձ կը պոռան, բողոքեց: Փոխէ, փոխէ՛ կնիկդ եւ

կօշիկդ, երիկդ եւ սառնարանդ, տունդ եւ հաւատքդ, **թելե-վիզիոնդ** եւ լեզուդ, **օթոդ** եւ եկեղեցիդ: Փոխե, **պապամ**, փոխե: Փոխուե, **պապամ**, փոխուե: **Չէնճը** եթե քու եւ իմ գլխուն զարներ, բան չէր պակսեր: Մեր հոգեւորականներո՛ւն գլխուն զարկած է ճիշդ հոստեղէն ըսելով աջ ձեռքին միջնեմատը երեք անգամ կոխեց ողորկ գանկին ճիշդ մեջտեղը:

Շարժումը նկատեց մեր դիմաց նստող երիտասարդ թուխ կինը, որ շպար չունէր եւ ձերմակ լաչակով մը ծածկած էր գլուխը: Ապշահար՝ բերանը արագօրէն գոցեց զոյգ ասիերով: Թեզանիքին ծայրէն կ'երեւէին ոսկի ապարանջանները: Անոնցմէ՛ ըլլալու էր, մտածեցի, առանց կարեւորութիւն տալու:

Բարեբախտաբար խօսակիցս չնշմարեց տեսարանը:

– Անգլերէնո՛վ պիտի դպչին եղեր երիտասարդներուն հոգիին: Երեւակայե՛՛: Թո՛ղ հայերէն սորվեցնեն եւ հայերէնով դպչին. ինչերնի՞ն կը պակսի: Սուրբ Մեսրոպը հայերէն գրել-կարդալ սորվեցաւ, հայերէն գրել-կարդալ սորվեցուց եւ հայախօս դարձուց Յիսուսը: Անգլիախօս Յիսուսով հայ չի պահուիր, հայ չի մնար, **եւարըմ**:

Քիչ է ըսել որ հոգեւորականները յուսախաբ ըրած էին զինք: Չուկը գլուխէն հոտած էր: Ինք կը ճանչնար բարձրաստիճան մը, որ տարիներէ ի վեր օձիքը յանձնած էր օձ հմայող ամերիկացիի մը, Ռասփութիւնի **գորփորէթ** տեսակէն:

– Հէյ վախ Հայ Եկեղեցի, կը մեռնիս կոր քուկիներուդ ձեռքով, մրթմրթաց եւ իր աւետարանէն գլուխ մըն ալ կարդաց մտաւորականներուն: Չեն շարժիր, չեն գրեր, չեն խօսիր, չեն պոռար, չեն կանչեր... գործածուած **չուալ** ծախելու ետեւէն են: Մէկը առ ...

– Բացառութիւններ կան եւ շա՛տ յարգելի, ընդվզեցայ եւ մենախօսութիւնը խզելով: Դուն իրաւունք չունիս...

– Եթէ կան, թող ձայն հանեն: Կը լռեն, ուրեմն չկան:

Սրահին մէջ միայն ինք ու եւ մնացած էինք: Ներս մտաւ

կարմիր գոգնոցով աղջիկ մը եւ իրեն ըսաւ որ բժիշկը զինք տեսնել կ'ուզէր: Չեմ գիտեր ինչո՞ւ, վախ մը ինկաւ մէջս. լաւ նշան չէր: Շիտակը զոջացի յանդիմանած ըլլալուս:

Ոտքի ելաւ, կամաց-կամաց քալեց դէպի դուռը մէկու մը պէս որ չ'ուզէր մեկնիլ կամ ժամանակ կ'ուզէ շահիլ ըսելիքին վրայ որոճալու համար: Հազիւ դրան մօտ հասած ետ դարձաւ, դէպի առաջ երկու քայլ առաւ եւ թեթեւ մը ժպտելով՝

– Մոռցայ քեզի ըսելու... կարծեմ կնիկս յղի է... նորէն սիրտխառնութիւն պէտք է ունեցած ըլլայ... Ամուսինիդ անցած ըլլայ ըսէ, իրեն հաւնեցայ, իրարու լեզուէն կը հասկնանք... օր մը առ մեզի եկուր: Կնիկս համով պուրիթօ կը շինէ... կ'ուզեմ որ հայ բարեկամներ ունենայ, հայութեան մօտենայ... կը սպասեմ, հա՞, **բոն փուէնի** տունն է, չմոռնաս...

Նոյեմբեր 2006

Ֆորթ Լի, ՆՃ

ԾԱՂԿԱԶԱՐԴ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ



րտասովոր նպատակին իրականացման պահը քանի կը մօտենար, Անուշակին մէջ ա՛յն աստիճան կը մեծնար յաջողութեան կասկածը որ երբեմն ան նոյնիսկ կը մտածէր կասեցնել գործողութիւնը, գոր ինք յղացեր էր շաբաթներ առաջ, ուժգին հարուածի մը ազդեցութեան տակ, եւ որուն յաջողութիւնը կը ցանկար ամբողջ էութեամբ:

Վերջապէս երկար, շա՛տ երկար գիշերէ մը ետք, առտուն կանուխ ոտքի ելաւ եւ, առանց սպասելու տան հոգատար գիւմրեցի Անջելային, ձեռնարկեց մաս-մաքուր ընդարձակ տունը մաքրելու աշխատանքին, երկու ափսէ **քիւֆթ** պատ-րաստեց սառեցնելու նպատակով եւ հապճեպ արդուզարդէ մը ետք, կէսօրը անց, ինքնաշարժով մեկնեցաւ եւ շուտով ինքզինք նետեց փակ շուկային իրարանցումին մէջ: Աննպատակ շրջեցաւ գրեթէ բոլոր մեծ վաճառատուները, մտաւ նորաբաց Սթարպաքս սրճարանը շունչ մը առնելու, **լաթթէ** մը խմեց եւ մինչեւ երեկոյեան եօթը դիտեց անցորդները: Երբ տուն վերադարձաւ, ամուսինը իրեն կը սպասէր մտահոգ:

– Վիճակդ չեմ հաւնիր կոր, երկու շաբաթ է ի վեր խենթի կը նմանիս... Խօսէ, մենք ալ գիտնանք...

Խօսքը չկրցաւ ամբողջացնել: Անուշակ արագ քայլերով ուղղակի ննջասենեակ գնաց եւ կէս ժամ ետք հանգստաւէտ շրջագգեստով մը եկաւ ու նստաւ բազմոցին միւս ծայրը:

Նոր սկսեր էր պատկերասփռումը արաբերէն հին

Ժապաւենին, որուն գլխաւոր դերակատարն էր եգիպտացի նշանաւոր դերասան Մահմուտ Էլ Միկի, հանրածանօթ «պաստառի ոճրագործը»: Երբեմն-երբեմն Անուշակ ձայնակցեցաւ ամուսինին մեկնաբանութեանց յիշելով որ ժամանակին արաբները անհաւատալի բացագանչութիւններ կ'արձակէին սինեմաներու մէջ՝ գործողութեանց ընկերակցող տեսարաններէն գերագրգռուած երեւակայութեամբ:

Կարելի է ըսել որ Անուշակի ճիգը ակնկալուած արդիւնքը տուաւ եթէ մարդ չնշմարէր սուրճի սեղանին վրայ երկարած ոտքերուն յարափոփոխ խաչաձեւումը, ջղային դիրքափոխութիւնը, յաջորդաբար մէկը վեր, միւսը վար: Երկու ժամուան ընթացքին միակ կայուն բանը ականջն էր, ո՛չ... ա՛յքը, որ չէր հեռացած հեռախօսէն երբ հնչեց գործիքը...:

Յաղթանակի աւետի՞ս, պարտութեան գո՞յժ, թէ Շաբաթ գիշերով որսի ելած վաճառորդի փչոց: Անուշակ ոտքի ելաւ, հաշուեց զանգերը, երրորդին տարակուսանքով վերցուց ընկալուչը եւ գայն մօտեցուց աջ ականջին՝ մազը հեռացնելով:

– Չէ՛ աստ, այլ յարեա՛ւ, աւետեց բամբ ձայն մը:

– **Բռնկ նամպըր**, պատասխանեց Անուշակ, երբ գիծը արդէն փակուած էր... կամաց մը ընկալուչը տեղը դրաւ եւ ժպտադէմ քալեց դէպի ննջասենեակ: Ուրիշ մը իր հրճուանքը պիտի ուզէր կիսել ամուսինին հետ, պիտի սրէր գայն կամ խեղդէր... ուխքիով կամ վոտքայով, բայց ան պետք է ստուգէր Մըսթըր Մայրընի ծածուկ հաղորդումին ճշմարտութիւնը:

Անկողինին մէջ, աչքերը փակ բայց արթուն, Անուշակ վերաքաղ մը ըրաւ դէպքերուն, որոնք մղած էին զինք

յղանալու եւ շարժման դնելու իր ծրագիրը: Թէեւ երբեք չէր կասկածած իր որոշումին արդարացիութեան, բայց այդ պահուն չբացատրուած պահանջ մը կը զգար զայն հաստատելու:

...1990-ին Ֆլորիտայի մէջ յանկարծամահ եղած էր եղբայրը 60 տարեկանին: Կենսուրախ, կատակասէր, մարդամօտ եւ հայրենասէր Սասունին մահէն շատ ազդուեցաւ: Երեք եղբայրն էր, որուն միշտ մօտ զգացած էր յատկապէս իրենց հօր մահէն ետք: Սասուն մթնոլորտ փոխելու համար յաճախ հազարաւոր մղոն կը կտրէր ինքնաշարժով զինք տեսնելու: Եւ ամէն անգամ կը գանգատէր որ իր կեանքը անտանելի պիտի ըլլար Հարաւի այդ քաղաքին մէջ եթէ չըլլար նախակրթարանի դասընկերներէն չար Միհրանը, հիմա կալուածային առեւտուրի շատ յաջող տան մը տէր-տնօրէն Մըսթըր Մայրընը:

Գոյժը առնելուն ամուսինին հետ փութաց Փորթ Մէյնթ Լիւսի եւ ձեռք առաւ թաղման բոլոր կարգադրութիւնները: Ինք, ամուսինը, Սասունի այրին՝ Բեբրոնէն եւ Մըսթըր Մայրընը անմիջապէս գերեզմանատուն գացին հողաշերտ ընտրելու: Մայրըն փորձագէտի պէս թելադրութիւններ ըրաւ: Եւ երբ յարմար տեղ մը գտած էին, «Ինչ կ'ըլլայ, ես ալ կ'ուզեմ թաղուիլ Սասունիս քով», ըսաւ Բեբրոնէն արցունքները սրբելով: Ամուսինը գերեզմանի երկու հողաշերտ գնեց առանց գանգատելու:

Թաղման օրը երբ դագաղը բերին եւ գետեղեցին փոսին վրայ, Բեբրոնէն չդիմացաւ. «Ո՞ւր կ'երթաս, Սասո՛ւն, զիս ո՞ւր կը ձգես»: Ամերիկացի բարեկամուհին լացուկոծը տեսնելով ջանաց մխիթարել զինք. «Փեփրըզ, **հանի**, գաւակներուդ մէջ կ'ապրի Սասոնը»: Մտիկ չըրաւ. «**Նո՛, նո՛**» եւ շարունակեց

հայերեն ողբը. «Ա՛խ, Սասուն, ե՛ս երթայի, դո՛ւն մնայիր. դո՛ւն պէտք է տեսնեիր փաշայի պէս երկու մանչերուդ պսակը...»:

Երկու հողաշերտերուն գնման օրն իսկ գլխաքար մը ապսպրեց երկու հոգիի համար անգլերէն արձանագրութեամբ.

ԱՍՏ ՀԱՆԳՉԻՆ

Մեր սիրելի ծնողքը, եղբայրն ու հարսը

ՍԱՍՈՒՆ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԵԱՆ

1930-1990

ԲԵՔՐՈՆԷ (ՓԵՓՈՐՁ) ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԵԱՆ

1945-

Բեքրոնէի Փեփորք ըլլալը նորութիւն էր. Սասուն բան մը չէր ըսած իրեն: Չուզելով սիրտը ցաւցնել, տեղի տուաւ փափաքին եւ արձանագրութեան մէջ «Փեփորք» ալ աւելցուց: Նիւ Եորք վերադառնալէ ետք ամէն օր հեռաձայնեց Բեքրոնէին, միշտ պատրաստակամութիւն յայտնելով օգտակար հանդիսանալու, բայց անցնող օրերուն հետ կը զգար որ բան մը պակսած էր անոր քրոջական ջերմութենէն: Կը խորհէր, քիչ մը գոհունակութեամբ, որ Բեքրոնէ տակաւ վարժուիլ սկսած էր նոր կացութեան:

Թաղումէն հազիւ երկու շաբաթ անցած Բեքրոնէ՛ն հեռաձայնեց: Երբեք չէր պատահած: Հեռախօսողը միշտ ինք կ'ըլլար: Ձայնը կը դողար, յետոյ սկսաւ լալ: Պէտք եղաւ որ քանի մը անգամ յանդիմանէր. «Հանդարտէ, աղջիկ, ի՞նչ ունիս. Սասունը ետ պիտի չգայ, գիտե՞ս...»:

Բեքրոնէ մտիկ չէր ընէր: Վերջապէս երբ ի վիճակի եղաւ խօսելու, հեւալով ըսաւ որ կուլար խաբուած կին մը ըլլալուն համար... Սասուն, որ գործի բերմամբ յաճախ կը ճամբորդէր,

այսքան տարի խաբած էր զինք : Բեբրոնէի ճիշդ, օ՛ այդ ճիշդ – խաբե՛ց, խա՛բե՛ց անխղճօրէն, անգթաբար, խաբե՛ց անամօթաբա՛ր – մոռցուելիք ճիշ մը չէր, բայց Բեբրոնէ լախտը վերապահած էր վերջաւորութեան: Գտած էր ապացոյցը...: Քրիստոսը վկայութեան կանչելով յայտարարեց որ Սասունի փոքրիկ պայուսակին մէջ, ածիլուելու առարկաներուն քով գտած էր անհաւատարմութեան ապացոյցը՝ փակ պահարանիկ մը, անկիւնը՝ տրոյեան զինուորի զուխին սաղաւարտով նկարը «գերհօր» մակագրութեամբ:

Բեբրոնէի յայտնութիւնները չէին ցնցած զինք: Եթէ նոյնիսկ մեղադրանքը ճիշդ էր, այրին ինչո՞ւ Սասունի յիշատակը պիտի աղարտէր այդքան շուտով: Մարդ ինչպէ՛ս կրնար այլափոխուիլ երկու շաբթուան մէջ...: Իր համոզումով մեղադրանքը շինծու էր, որովհետեւ եղբայրը հիւանդ էր: Քանի՛ անգամ անոր թոքերուն ելեւէջը տեսած էր բաճկոնին կոնակէն: Դժուարութեամբ քալող Սասունը ինչպէ՛ս կրնար խոյանալ կնոջ վրայ... «Տրոյեան» գլխանոցով: Չէր կրցած բացատրութիւն մը գտնել Բեբրոնէի սուտին մինչեւ որ տեղեկացաւ իրողութեան:

Այդ գիշեր քնանալ չկարենալը ձեւով մը բարեբախտութիւն էր Անուշակին համար, որովհետեւ մանրամասնութիւններ կային զորս ինք ալ մոռցած էր:

Թաղումէն երկու օր ետք, այրի վերապատուելի մը, Փ. Տէյվիտ Գրուք, որ կը բնակի եղեր եղբօր բնակարանէն չորս տուն անդին, ցաւակցական այցելութեան կուգայ Փեփըրզին: Այցելութիւնները կը դառնան փոխադարձ եւ օրական: Սասունի մահուան 39րդ օրը Գրուք եւ Փեփըրզ քաղաքապետարանի պսակով կը սրբեն իրենց անկողինները...: Սուտի պատճառ **լէթէքսէն** թափած էր վրէժի խլինքը:

Յայտնութեան հեռաձայնը վերջինը եղաւ: Բեբրոնէն ջնջուեցաւ իր գիրքէն: Բայց տղաքը տարբեր էին. ի՛րն էին, իր արիւնն էին: Մեծը՝ Կարոն կը կրէր հօր անունը, փոքրը՝ Արան կտրիճ հօրեղօր: Երկուքն ալ համալսարանական: Երկուքն ալ կը զգային իրենց հօրաքրոջ գուրգուրանքը, շօշափելի հոգածութիւնը: Արան անդամ էր Հայ Երիտասարդաց Միութեան կեդրոնական վարչութեան եւ տարին երկու-երեք անգամ ժողովի կուգար Նիւ Եորք: Իրեն համար հրաշալի առիթներ էին ճաշի շուրջ տղոց հարցերով հետաքրքրուելու, զբաղելու... Մասունը ապրեցնելու:

Կարոն այս տարի շրջանաւարտ պիտի ըլլար: Ստերմացած էր հայ շնորհալի օրիորդի մը հետ եւ կը ծրագրէր ամուսնանալ եթէ յաջողէր յարմար տուն մը գտնել, յարմար՝ դրամական իմաստով, երկու յարկաբաժիններով **ֆիքսըր ափըր** մը, ովկիանոսէն ոչ հեռու: Բարեկամուհիին հայրը, որ վարպետ ատաղձագործ էր, խոստացեր էր կատարել անհրաժեշտ նորոգութիւնները: Կարօ չարաչար աշխատանքով խնայած էր **տառունփելմընթին** մեծ մասը, իսկ Մըսթըր Մայրըն, որ ուզած էր անձնապէս կատարել փնտռոտութը փոխանակ իր գործակալներէն մէկուն վստահելու, միջնորդչէք պիտի չգանձէր վաճառողէն: Յարկաբաժիններէն մին պիտի բնակէր Կարոն իր կնոջ հետ, միւսը պիտի վարձու տար: Վստահ էր որ պիտի կրնար առանց դժուարութեան վճարել ամսական **մորթկէճը**, կալուածային տուրքն ու միւս ընթացիկ ծախքերը:

Որոշած էր եղբօր զաւկին ամուսնութեան նուէրը. պիտի դիւրացնէր կամ արագացնէր կալուածին գնումը եւ այդ նպատակով, առանց Կարոն տեղեակ պահելու, պիտի հեռաձայնէր Մըսթըր Մայրընին: Բայց զարմանալի էր

Սասունի մանկության ընկերոջ բարեսրտությւնը: Միջնորդի մը համար միջնորդչէքէ հրաժարիլ որպէսզի վաճառողը պահանջած զինք նուագեցնէ նոյն չափով յօգուտ գնորդին, լսուած չէր կամ ինք չէր լսած:

Ընդհանրապէս կը ճանչնար եղբօր դասընկերները կամ ծանօթ էր անոնց առնչուող պատմութեանց, կեանքի յատկանշական դրուագներուն, բայց «չար Միհրանը» կորսուած էր տարիներու մշուշին մէջ: Զօրաւոր փափաք մը զգացեր էր զինք ճանչնալու: Առանց ժամանակ կորսնցնելու հեռաձայնեց Սոնթրէալ եւ Լոս Անճելըս հաստատուած իր դասընկերուհիներուն եւ ծանօթներուն:

Քաղած տեղեկութիւնները կը բացատրէին բարեսիրտ Մըսթըր Մայրընը, բայց նաեւ կրնային բացատրել չար եւ անպէտ Միհրան մը...: Ուշիմ, գեղադէմ եւ բարձրահասակ Միհրան սարկաւագ կը ձեռնադրուի եւ կը պատրաստուի վեղար առնելու, բայց անձրեւոտ օր մը կը փախչի վանքէն տեսուչին հետ սոսկալի վէճէ մը ետք: Ատեն մը կը թափառի Պէյրութի մէջ յետոյ շունչը կ'առնէ Տիթրոյիթ խորհելով որ կրնար գործ ճարել ինքնաշարժ արտադրող գործարաններէն մէկուն մէջ: Գործատէր հայ ունեւորներ ալ կային հոն եւ կը յուսար մէջտեղ չմնալ հայահոծ այդ գաղութին մէջ: Իրականութեան խարոյկը կը լափէ յոյսերը: Կը ծախսէ հետը բերած քանի մը տոլարը: Բարեբախտաբար մեռելատան մը իտալացի տէրը զինք մեռելակառքի **շօֆէօր** կը վարձէ եւ թոյլ կուտայ որ մեռելատունը բնակի: Գիշերային դասընթացքի մը հետեւելով ձեռք կը բերէ թաղմանական տնօրէնի պետական արտօնագիր: Քանի մը տարի ետք իտալացին կ'օգնէ որ Միհրան գնէ **պիզնէտը**, որովհետեւ զաւակը հետաքրքրուած չէր այդ գործով: Ու **պիզնէտը** գլուխը առած

կ'երթայ շնորհիւ... հայ յաճախորդներուն, որոնք իրենց ողջութեան ձեռք չէին տուած տիրացու Միհրանին, բայց յետ մահու կ'իյնային Մըսթըր Մայրընին ձեռքը: Տաքուկ կլիմայի մը կարօտը պատճառ կ'ըլլայ որ բարձր գինով մը ծախէ շահաբեր **պիզնէսը** եւ փոխադրուի Փորթ Սէյնթ Լիսի, Ֆլորիտա: Կալուածային առեւտուրը հարստութիւնը բազմապատկելու անձայրածիր հորիզոն մը կը բանայ իր առջեւ:

Տպաւորուած էր լսածով: Ուզեց Սասունին բարեկամութիւնը ի'նք շարունակել: Մըսթըր Մայրընին հեռաձայնելով ըսաւ որ երբեք չէր մոռցած Սասունի թաղման առթիւ ցոյց տուած եղբայրական վերաբերումը, եւ թէ Կարոյին ընծայած օգնութիւնը շատ կը յուզէր զինք: Նոյն ատեն յայտնեց որ Կարոյին փափաքած տունը պէտք է գնուէր, որովհետեւ այլեւս **տառունփէյմընթի** հարց չկար: Ի'նք պիտի նուիրէր պակսող գումարը: Վերջին խօսքը եղած էր. «Մըսթըր Մայրըն, եթէ կարենամ համոզել ամուսինս, ես ալ կը փափաքիմ ովկիանոսին նայող ընդարձակ **գոնտոմինետում** մը գնել երկու միլիոն տոլարի սահմանին մէջ: Եթէ աղուոր բան մը գտնես, լուր տուր:»

Կարոյի ամուսնութեան թուականը չէր գիտեր, բայց պարտականութիւն նկատած էր այժմէն ուրախացնել զինք եւ յայտնել **տառունփէյմընթին** կապակցութեամբ իր որոշումը՝ մտահոգութեան բեռ մը վերցնելով անոր ուսերէն մանաւանդ որ զայն հաղորդած էր Մըսթըր Մայրընին: Հեռաձայնեց: Կարոյին ուրախութիւնը անսահման էր: «Հոքքուր, աննման հոքքուր», ըսաւ, եկեղեցին **պապայիս** տեղ դուն եւ **ամմոն** պիտի բռնէք, ես առանց ձեզի չեմ ամուսնանար»: Պատասխանեց որ չէր կրնար գալ, բայց հոգով հետը պիտի ըլլար ինչպէս որ միշտ եղած էր:

Կարօ ճիշդ կռահած էր պատճառը: Հօր մահէն չորսուկէս տարի ետք առաջին անգամ ըլլալով ան հարկ զգաց յիշելու Տէյվիտ Գրուքը: Երեք ամիս անկեւանոց մնալէ ետք, վերապատուելին կը մեռնի եւ մայրը զինք կը թաղէ հօր կողքին գտնուող պատրաստ հողաշերտին մէջ: Կարօ զայրացած էր մօր ընթացքէն: «Հիմա նոր հողի դրամ պիտի տանք, կեանքի մէջ դրացի էին... մահուան մէջ ալ թող դրացի ըլլան, ինչ կ'ըլլայ եղեր...», կ'ըսէ Բեբրոնէ եւ վերցնել կուտայ գլխաքարը:

Ուղեղը պիտի պայթէր: Հագիւ կրցեր էր փսփսալ «Հիմա գոցենք, տղաս, ես վաղը...» եւ ինքզինք նետած բազմոցին: Բարեբախտաբար Անջելան հոն էր: Սառ կապեց ճակտին, հանդարտեցուցիչ դեղահատ մը տուաւ: Կէս ժամ ետք, վզին եւ ուսերուն վրայ մարձումի շարժումները բարերար դեր ունեցան: Ինք, որ շուտ կը յուզուէր, երբեմն առանց նկատելի պատճառի, գիտէր նաեւ սառնօրէն մտածել: Բայց մտածումէն առաջ... կուգար որոշումը: Եւ բազմոցին վրայ, մինչ Անջելայի բթամատները հորիզոնական ձեւով ճակտին մէջտեղէն ամպերը կը հեռացնէին դէպի աջ եւ ձախ, որոշեց Սասունին եւ համայն Աստուածատուրեան գերդաստանին դէմ քածին նետած ձեռնոցը վերցնել... շուտով:

Երկու օր ետք, կէսօրուան մօտ յայտնուեցաւ Մըսթըր Մայրընի գրասենեակը, առանց ժամադրութեան: Հոն չէր: Յուսախաբութիւնը չափ չունէր: Մինչ հիւրընկալ աղջիկէն կը խնդրէր ամէն գնով անմիջապէս կապ հաստատել **պօսին** հետ, Մըսթըր Մայրըն ներս մտաւ եւ զինք տեսնելուն գուրգուրանքով գրկեց եւ յարգանօք իր գրասենեակը առաջնորդեց գործակալներուն զարմացական նայուածքին տակ:

Մըսթըր Մայրըն ծանօթ էր անցուդարձերուն: Լաւ որ ան ընդունեց միասին այցելել գերեզմանատուն, որովհետեւ ինք

առանձինն պիտի չկրնար գտնել Սասունը: Այդտեղ բոլորը նոյնն են եթէ չըլլան գլխաքարերը: Քանի մը փունջ վարդ եւ մեխակ գետեղեց Սասունի գերեզմանին վրայ: Մայրըն արտօնութիւն խնդրեց իրմէ մէկ ժամի չափ հեռանալու, ըսելով. «Սասունը քեզի կը սպասէր, ուրախ է որ հոս ես, շղթայուած է, կ'ուզէ որ առանձին ըլլաս հետը...»:

Վերադառնալէ ետք զինք ճաշարան մը տարաւ, յետոյ ետ գրասենեակ եկան քիչ մը խօսելու... Մայրըն շատ լաւ կը ճանչնար վերապատուելի Գրուքը, որ պատճառ եղած էր իր յաճախորդներէն 36 ընտանիքներու սնանկութեան: Կը քարոզէր հարստանալու եւ բարօր ապրելու աւետարանը եւ զայն կը գործադրէր: Միջին դասու համեստ մարդոց փոխ դրամ կուտար որպէսզի տուն գնեն... պարզապէս երկու թուղթ ստորագրելու փոխարէն: Բարերարեալները ամէն ամիս դրամը մաս առ մաս պէտք է վերադարձնէին: Մասնավճարին մէկ մասը պիտի նուագեցնէր պարտքը, միւս մասը, որ ընթացիկ տոկոսին գրեթէ կրկինն էր, պիտի երթար Աստուծոյ, այսինքն եկեղեցիին, իբրեւ նուէր, կարելի դարձնելու համար Աստուծոյ **պիգնէսը**...: Շրջանային դատախազին կողմէ հարցաքննուած պահուն վերապատուելին յայտարարէր էր որ, Աստուծոյ պատուէրով, կալուածային գործառնութեանց մէջ ինք միշտ դիմած էր ճշմարիտ քրիստոնէայ եւ խորապէս հաւատացեալ Մըսթըր Մայրընի խորհուրդին...

Մայրընի կեցուածքը, արտայայտութիւններն ու վերապատուելիին նկատմամբ նողկանքը համարձակութիւն տուած էին հարցնելու.

– Մըսթըր Մայրըն, դուն ճիշդ կը գտնե՞ս որ եղբայրս չկարենայ քնանալ յաւիտեանս յաւիտենից...

Մայրըն հանդարտօրէն բացաւ գգրոցը եւ բան մը փնտռելու պէս պարունակութիւնը շարժելով

– Թերեւս... Օ՛... ո՛չ... – պատասխանեց ցած ձայնով եւ առանց գլուխը վերցնելու – կախում ունի... Գրութ կրնայ տարբեր տեղ ալ հանգչիլ... կախում ունի...

Ժամերը սահած էին: Մայրըն մերժեց թաքսի մը կանչելու խնդրանքը: Իր թուղ բօյս-ով ճամբայ ելան դէպի օդակայան: Երբ մօտեցան, Մայրըն, ուշադրութիւնը ճանապարհին, ինքիքէն խօսելու պէս, ըսաւ. «Երեք շաբաթէն, այսինքն Դեկտեմբեր 24-ին պիտի հեռաձայնեմ քեզի գիշերուան ժամը 10-ի եւ 11-ի միջեւ: Երկու զանգէ ետք եթէ փակեմ, կը նշանակէ ամէն բան անշարժ կը մնայ... աւետիսը դիւրաւ պիտի հասկնաս»:

Առաւօտեան լոյսը կը սողար ննջասենեակէն ներս: Վերաքաղը, որ սպառած էր Անուշակի գիշերը ուղեղին ամբողջական լարումով, լիովի հաստատեց նպատակը առանց գործադրութեան ծրագրումին մէջ որեւէ սխալ երեւան հանելու: Կը մնար մեծ հարցումը—Պէ՞տք է հաւատար աւետիսին: Խաբուած չէ՞ր...: Մըսթըր Մայրըն վարձուած մէկը չէր... սրտակից... սուրբ արդարութեան... վրէժ... վրիժա... սրբազան վրիժառու... առու... առու... ռու... Քունը զինք առեւանգեց մտածումներուն անտառէն եւ իր մօտ պահեց մինչեւ գիշեր:

Քրիսմսը նշանակութիւն չունէր Անուշակին եւ ամուսինին համար: Երբեք չէր ունեցած: Հանդարտ օր մը անցուցին միասին: Շատո՛նց առանձնութիւն չէին վայելած: «Պէտք է յաճա՛խ քրիսմս ստեղծենք... ճանս», ըսաւ ամուսինը, որ վաղուց մոռցած էր Սասունը, Բեքրոնէն եւ գնած երկու հողաշերտերը:

Դեկտեմբեր 26-ի կեսօրուան մօտ Օլտ Գաունթի Էմբրոլտ գերեզմնատան գործաւորները գտան թարմ հողակոյտ մը ծածկուած երկու թարմ ծաղկեպսակներով: Զարմացան, որովհետեւ գերեզմանատունը փակ էր երկու օր եւ իրենցմէ ոչ ոք գործի եկած էր: Անմիջապէս լուր տուին վերահսկիչին եւ իրենց արհեստակցական միութեան քարտուղարին՝ վախնալով որ տնօրէնը թերեւս **իլիկը** մեքսիկներ աշխատ-
ցուցած է աժան սակով:

Ըստ սովորութեան՝ իրիկուան դէմ Անուշակ անցաւ հեռուստացոյցին առջեւ: Ամերիկայի չորս կողմէն տեղական հետաքրքրական լուրեր կը տրուէին:—Երեք փորձառու երիտասարդներ կորսուած էին Հուտ ձիւնապատ լեռան խոռոչներուն մէջ . թաքսիի վարորդ մը օգնած էր յաճախորդի մը ծննդաբերութեան, մայրին վրայ, եւ նորածինը տեղւոյն վրայ կոչած Թաքսի. 90 տարեկան հաշմանդամ պառաւ մը ձերբակալած էր 22 տարեկան աւագակը որ...

Յանկարծ հաղորդավարը ունկնդիրները հրաւիրեց ուշադրութեամբ մտիկ ընելու. «Չէ Աստ, Այլ Յարեաւ՝ խորագրին տակ այսօրուան թիւին մէջ Օ.Գ. Նիուզ Կազէթը կը հաղորդէ—Օլտ Գաունթի Էմբրոլտի վերահսկիչը ոստիկանութեան իմացուցած է որ գերեզմանի մը մէջէն դագաղ մը անհետացած է...: Նախնական քննութեամբ «յարութիւնը» դիակապուտի կամ վանտալներու գործ չի նկատուիր»:

Դեկտեմբեր 2006

Ֆորթ Լի, ՆՃ

ՄՈՒԽԻՐԸ ՏԱՔ Է ՏԱԿԱԻԻՆ

Խ

նամի Մարիամ սովորութիւն ունէր տարին անգամ մը, ամառը, բազմանդամ ընտանիքը հիւրընկալելու Ալփայնի շքեղաշուք բնակարանին մէջ: Քոյր, եղբայր, հարս, փեսայ, զաւակ, թոռ, խնամի, տալ, տագր, թիւով 40-50 հոգի ամբողջ օր մը կը վայելէին Մարիամին սեղանները, զորս ինք կը պատրաստէր օժանդակութեամբ երեք սպասուհիներու:

Երկրորդ անգամ ըլլալով զիս ալ հրաւիրած էր եւ ընդունած խնամիի պատիւներով, թէեւ մեր խնամութեան կապը շատ թոյլ էր, չըսելու համար անգոյ: Հիւրերուն մեծ մասը չէի ճանչնար, շատերու հետ նոյնիսկ բառ չէի փոխանակած: Աւելորդ կը նկատէի նոր անուններ միտք պահել քանի որ զանոնք պիտի տեսնէի լաւագոյն պարագային մէկ տարի ետք:

Փոխանակ սանդուխներէն վեր ելլելով առջելի մեծ դռնէն տուն մտնելու, քալեցի լողաւազանին կողմը, շէնքին ետեւը, ուրկէ երգի եւ նուագի ձայներ կուգային: Ոմանք կը լողային, ուրիշներ խումբեր կազմած կը խօսակցէին: Կացութիւնը խմիչքով մը աննշմար կերպով դիտելու համար մօտեցայ անկիւնի **պառիւն**, երբ զգացի ձեռքի մը հպումը ուսիս:

– Հոս ի՞նչ կ’ընես, **օլտ մէն**:

Չարլին կը ճանչնայի մարգարանէն, ուր կուգար շաբաթը 2-3 անգամ, բայց երբեմն շաբաթներ կ’անհետանար յետոյ նորէն յայտնուելու համար: Ի՛նք մօտեցած էր ինծի եւ ինքզինք ներկայացուցած երբ տարիներ առաջ օր մը բարձրախօսէն անունս յայտարարուեցաւ ու ես քալեցի դէպի տնօրէնին սենեակը ստիպողական հեռաձայնի մը պատասխանելու համար:

– Չէի կարծեր որ հայ ես, ըսած էր, հայերը հազիւ թէ միջահասակ կ'ըլլան:

Երեսուննոց թխադէմ երիտասարդ մըն էր: Կարճ մազերը, կոփամարտիկի իրանն ու ճերմակ խորքի վրայ գնդիկանման սեփ-սեւ աչքերը ժողովրդական դէմք մը ըրած էին զինք կիներուն եւ աղջիկներուն մօտ, որոնց համար լափելի որս մըն էր Ուօլ Սթրիթ աշխատող, քաջառողջութեան եւ ուժի մարմնացում այս տղան, որ նոր ամուսնալուծուած էր:

Մարգարանին հանդերձատան մէջ այրերն ու կիները կը մերկանան իրենց զգեստներէն հաւաքաբար, «գետնին վրայ», իրենց գաղտնիքներէն՝ առանձնաբար: Շշուկները կը շրջին անկաշկանդ, նայուածքներն ու ցուցամատները զգուշութեամբ կը բանին, հեռուէ հեռու, եւ համբաւներ կը շինուին եւ կը կործանին ակնթարթի մէջ:

Չարլիին մասին գիտէի ինչ որ տեսած ու լսած էի: Բարեբախտաբար համբերութեամբ կը հանդուրժէր անվերջանալի քաշքշուքներու: «Կեղծ հայ» կոչած էի զինք երբ ըսաւ որ չէր ուզեր հայերու հետ գործ ունենալ, հակառակ անոր որ որեւէ շփում չէր ունեցած հայերու հետ, բացի մանկութեան եւ վաղ պատանութեան տարիներէն երբ շաբաթավերջերուն հայրը զինք Պրուքլինէն Ֆորթ Լի կը բերէր ծնողաց մօտ:

Քանի մը առիթներով յիշեց որ հայրը կշտամբած էր մեծ մայրը, կեսարացի շատ հաւատացեալ կին մը, որ կիրակի օրերը զինք Ս. Թովմաս եկեղեցին կը տանէր, շապիկ հագցնել կուտար որպէսզի մոմակալութիւն ընէ: Ո՛չ միայն կշտամբած էր, այլ կտրուկ կերպով արգիլած:

Բաւականատէն ինձմէ պահեց իրականութիւնը մինչեւ որ օր մը խոստովանեցաւ որ ինք ալ հօր նման կ'ատէր զԱստուած, կ'ատէր Հայ Եկեղեցին, կ'ատէր հայր եւ հայրութիւնը:

– Հօրդ ենթակայ չես, ըսի, Ուօլ Սթրիթ կ'աշխատիս, խելքդ գործածէ, **գամ հօւ, Չարլի**:

– Կարծեմ ժառանգական է... ես ո՛չ մէկ պատճառ ունիմ ատելու հայն ու հայութիւնը:

– Իսկ Աստուած եւ Հայ Եկեղեցի՞ն...

– Հոգիիս եւ գրպանիս հարուածը եկաւ Նաւայէն: Ուօլ Սթրիթի մէջ հանդիպած էի իրեն: Հիւրընկալուիի էր: Սիրեցի: Օրական քսան ժամ աշխատեցայ որպէսզի զինք իրաւաբանական վարժարան դրկեմ: Վկայական առած օրը, այո՛, ճիշդ նոյն օրը, դատական պաշտօնեան ամուսնալուծում պահանջող թուղթերը ձեռքս դրաւ:

– Կեղծ հայ, քեզ չեմ հասկնար: Շփոթած եմ: Դուն հանելուկ մըն ես, ըսի, եւ առաջարկեցի որ զիշեր մը միասին ընթրենք:

Ընդունեց: «Քեզի պէտք է բացուիմ», ըսաւ: Բայց ան նորէն անհետացաւ:

Խնամի Մարիամին տունը **պատին** առջեւ Չարլիին անակնկալ յայտնութիւնը ուրախացուց զիս: Քիչ մը գիրցած տեսայ, երեսը ուռած թուեցաւ, մորթին գոյնը աւելի մութ:

– **Օլտ մէն**, խոստումիդ տէ՞րն ես, հարցուց ժպտալով: Ճաշի հրաւերդ ի գօրո՞ւ է:

Հաստատական պատասխանէս քաջալերուած ըսաւ որ **էնթի** Մարիամին խնդրանքով ինք պատրաստած էր օրուան **տիգըրթը՝ Պլէք Ֆորէսթ** կարկանդակը եւ յանձնարարեց որ անպայման ճաշակեմ իր գլուխ-գործոցը: Պարտէզն ու լողաւազանը պարպուիլ սկսած էին: Չարլին ու ես ալ ուղղուեցանք դէպի ճաշասրահ:

Տեղս «մեծերուն» սեղանն էր: Դիմացս նստած էին խնամի Մարիամին եղբայրը՝ Ռիչըրտ, ասոր կինը՝ վաթսուննոց Ռաքել եւ աները՝ Էհուտ, ճեփ-ճերմակ մազ-պէխով նիհարակազմ մարդ մը: Կերակուրի ամանները ձեռքէ-ձեռք դարձան ազատօրէն, առանց ձեւակերպութեան, բաժակները լեցուն-

ցան, պարպուեցան եւ դարձեալ լեցուեցան: Խնամի Մարիամ, քրտինքներու մէջ, ճերմակ գոգնոցը կապած, խոհանոցէն ճաշասրահ մագոց կը բանէր:

Նման առիթներու յաճախ մէկը փիլիսոփայական հարց մը մէջտեղ կը նետէ, դիտմամբ կամ առանց ուզելու, բայց ընդհանրապէս ալքովի զօրութեամբ, եւ յետոյ քաջաբար կը քաշուի հրապարակէն: Հոս ալ, չեմ յիշեր ինչպէ՞ս, խօսակցութեան նիւթը կեանքի ելեւէջները եղան, դժբախտութեանց անհակակշռելի ըլլալը, մարդուն անզօրութիւնը: Կարծեմ ըսի որ ամէն պարագայի պէտք չէ յուսահատիլ, թէ Աստուած օգնութեան կը հասնի կամ մօտաւորապէս այդ միտքը արտայայտող խօսք մը:

– Այդ չարագո՞րծը, պոռթկաց Ռիչըրտ: Ինծի չխնայեց, տղա՞ս ալ պէտք է հարուածէր եւ գլուխը ձախ դարձուց աչքը նետելով երիտասարդներու սեղանին:

Ձղային շարժո՞ւմ մըն էր, թէ մէկը կը փնտռէր, չգիտցայ, բայց բնագոյաբար ես ալ գլուխս աջ դարձնելով հետեւացայ իր նայուածքին ուղղութեան: Երիտասարդները կը զուարճանային: Մէկը բանէր մը կ’երգէր, միւսը աղջնակը կ’օրօրէր ծունկին վրայ, ուրիշ մը սակարանէն կը ձառէր:

– Կը ներես, ըսաւ, Ռիչըրտ, իմ կողմս ծռելով, **այ լուսք իթ:** Չենք գիտեր այս երիտասարդը քանի օր կամ քանի ամիս պիտի ըլլայ մեզի հետ: Դատապարտուած է, շատ դժուար է, անտանելի...

Խնամի Մարիամն ու քոյրը, գրեթէ միասին, ծրագրեալ շարժումով մը, անձեռոցով սրբեցին իրենց շրթունքներուն անկիւնները ապա լաթը քննեցին նայելու համար որ ինչ քանակութեամբ շրթնաներկ աւրած են: Ռաքէլ, որ «բնական» շպարով էր, ձախ ճկոյթով ականջը խառնեց: Էհուտ, անշարժ, սառած դէմքով կը դիտէր դիմացի պատէն կախուած Տեկան յիշեցնող պարուհի մը՝ գաղտնիքները վստահած սփինքսին:

Յայտնապէս միայն ես էի որ չէի գիտեր, թէ խօսքը որո՞ւն

կը վերաբերէր: Երիտասարդներուն մէջ «դատապարտուած» մէկը չէի տեսած, բայց պահը ծանր էր եւ անկարելի՝ որեւէ խելացի խօսք ըսել: Շատ կը ցաւիմ, կը ներէք ըսելով ոտքի ելայ եւ քալեցի ճաշասրահէն դուրս:

Պարտեզին ամայութիւնն ու լողաւազանին եզերքը գտնուող սեղանը տրամադրութիւնս կրնային փոխել Մոնթէ-քրիսթոյիս ծուխին եւ մուխին հետ: Երկար չմնացի առանձին: Խնամի Մարիամ ձեռքին ափսէն՝ սուրճի երկու գաւաթներով եւ **ՊԼԷ Ֆորէսթի** եռանկիւն կտորով մը, եկաւ եւ քովս նստաւ:

– Ասիկա պէտք է ուտես, խնամի, հրամայեց, ա՛լ ասկից Չարլին պիտի չշինէ...: Անցեալ տարուան հաւաքոյթիս խեղճ տղան հոս չէր. առտուն ստիպողաբար հիւանադանոց փոխադրած էինք:

– Չարլի՞ն... ուրեմն Չարլին...

Տակնուվրայ եղայ: Կը նմանէի խճողուած մայրուղիին վրայ պայթած անհուով ինքնաշարժ վարել հարկադրուած մարդուն: Ի՞նչ ընել, ի՞նչ ըսել... կռիւնս արտի՞կը... աղջիկներուն մո՞գը... Ուօլ Սթրիթի **ուիզը՞րտը...**

Մարիամ յայտնեց որ քաղցկեղը տաքածուած էր ներքին բոլոր գործարաններուն: Ազդեցիկ միջամտութիւններու շնորհիւ փորձնական դարմանումները կեանքը կրցած էին երկարել գրեթէ երկու տարի եւ հիմա վե՛րջ: Բժշկական ապահովագրութիւն չունէր, որպէսզի արինահոռութեան առաջին երեւումին բժիշկի դիմէր, որովհետեւ ամուսնութիւնն ու ապա ամուսնալուծումը չորցուցած էին նիւթական միջոցները: Ուօլ Սթրիթի շրջանին մէջ խմորեղէններու խոհարարի իր պաշտօնը թոյլ չէր տուած փոքրիկ յարկաբաժին մը վարձել եւ ինք գացած էր հօրը տունը՝ խորթ մօր եւ խորթ մեծ հօր հետ ապրելու:

Երեւոյթնե՛ր, երեւոյթնե՛ր, անուննե՛ր, անուննե՛ր—ծածկոցներ աղբերու, որբերու, ողբերու, ըսի ես ինծի, երբ վիշտս եւ զայրոյթս ելք մը կ'որոնէին:

– **Թրաճիքը** միայն Չարլիին մահը պիտի չըլլայ, լռութիւնը իզեց Մարիամ, զգացնելով որ պէտք կը զգար սիրտը պարպելու։—**Թրաճէտին** մահէն ետք ալ պիտի շարունակուի։

Մարիամ շատ տխուր էր որ Չարլին գերեզման իսկ պիտի չունենար եւ ինք պիտի չկարենար ամէն Մեռելոցի աման մը ջուր թափել, փունջ մը վարդ դնել վրան, որովհետեւ եղբայրը որոշած էր դիակիզարանէն զակին մոխիրը միս-մինակ տանիլ եւ ցանել ովկիանոսին վրայ Ազգայրի Փարքի կամուրջէն։ Ո՛չ տան կարգ, ո՛չ յուղարկաւորութիւն, ո՛չ թաղում։

– Ո՞ր ես, Միրեմ, ես ալ քեզ կը փնտռեի...

Ռաքէլն էր կանչողը դէպի մեր սեղանը ուղղուելով։ Մեր հոգեվիճակին մէջ չէինք նշմարած զինք, բայց խնամի Մարիամ, հաւանաբար ենթադրելով որ ան նպատակ ունէր տեղաւորուելու, փորձեց փակել կարելիութեան ճամբան։

– Ուրեմն, ըսաւ, խօսակցութիւնը շարունակելով ինծի հետ, կրնա՞նք վարձակալը դուրս նետել... երկու տարի առաջ **լիսը** դուն պատրաստած էիր...

Ռաքէլ, որ արդէն մեր մօտ էր եւ ոտքի, լսեց։

– Կը ներէք որ խանգարեցի։ Դուք **լիկլու** հարցերու մասին կը խօսիք։ Ես ետ կ'երթամ։

Մարիամ գոհ էր իր մարտավարութեան յաջողութենէն։ Ռաքէլի մեկնումով ան դարձեալ ունէր իմ ամբողջական ուշադրութիւնս։ Կ'ուզէի որ բացատրէր եղբօր տարօրինակ ընթացքը։ Ճանչցած ըլլալով զինք, քոյրն ու մայրը, Ռիչըրտ չդարմանուած ցնցումի մը գոհը կը թուէր ըլլալ։ Կարծիքս քաջալերեց զինք յայտնելու իր համոզումը որ ուրիշ մը կեանքի իրական կամ ենթադրական անելներէն դուրս գալու համար պիտի դիմէր անձնասպանութեան մինչ Ռիչըրտ իր զարտուղի ընթացքով պաշտպանած էր եւ կը պաշտպանէր ինքզինք...

Ռիչըրտի մանկությունն ու պատանեկությունը եղած էին զուարթ: Դպրոցին մեջ առաջին վարժուհին չէր կրցած արտասանել անունը, որ Խաչիկ էր: Կեսարացի հօր եւ մօր հետ ամեն կիրակի եկեղեցի կ'երթար: Երբ քիչ մը մեծցաւ, սկսաւ խորանին սպասարկել: Սրբազանը դպրութեան չորից աստիճան տուած էր իրեն եւ ուրիշ տղու մը՝ ուրախութիւն յայտնելով որ Հայաստանեայց Եկեղեցին երկու նոր **լիտըրներով** կ'օժտուէր:

Տարիները սահած էին աննշմար երբ Աւագ Հինգշաբթի մը, խաւարումի արարողութեան, մութին մեջ քնքուշ, զուլալ ձայն մը երգած էր «Ո՞ւր ես, մայր իմ»-ը յուզելով եւ լացնելով բոլոր հաւատացեալները:—«Ո՞վ է, ո՞վ է», փսփսացեր էին իրարու: Օֆիկը Ամերիկա կը գտնուէր ուսանողական վիզայով: Մարիամն ու մայրը չուզելով որ **օլտ գանթրիէն** եկած անուշիկ եւ **թալէնթըտ** հայ աղջիկը **հօմ սիք** ըլլայ, գրեթէ ամեն կիրակի, բայց անպայման բոլոր տօներուն, Օֆիկը եկեղեցիէն տուն կը բերէին, զինք իր սենեակը վերադարձնելու պարտականութիւնը թողլով Ռիչըրտին:

Առջի վայրկեանէն ստեղծուած համակրութիւնը կը դառնայ հնաւանդ մշտավառը Ռիչըրտին սիրոյ նորակերտ խորանին եւ ան կ'որոշէ յաւիտենապէս միանալ Օֆիկին:

Դրամատան ստորադաս պաշտօնեայ մը ըլլալուն, ընտանիք կազմելու հեռանկարով, կը ծրագրէ անձնական գործի մը ձեռնարկել բարեւաւելու համար նիւթական կացութիւնը: Կը դիմէ բարեկամին՝ Ժանոյին, որ իրմէ քանի մը տարի մեծ էր եւ կը զբաղէր շինարարութեամբ:

Բոլորը կը զարմանային Ժանոյին եկեղեցասիրութեան: Կարծես ան եկեղեցիէն դուրս կեանք չունէր: Հոն էր ամեն կիրակի, հոգաբարձութեան կ'օգնէր, ինք կ'ըլլար պնակին «բացում» ընողը՝ քսան տոլարնոցով մը: Հայր սուրբին եւ սրբազանին աջը երբ առնէր, կէս մեջք կը խոնարհէր: Երկուքն ալ արժանի նկատած էին Ժանոն անդամ ընտրելու

Տայոսիզըն Գաունսըլին, որ Ամերիկայի թեմին բարձրագոյն վարչութիւնն է: «Ի՛նչ ըսեմ», խոստովանեցաւ Մարիամ, «սիրտս կը զարներ երբ կը հանդիպէի լակոտին... շատ ուրախացայ որ ընդունած էր Ռիչըրտին առաջարկը»:

Սեփական գործը թէւ կը պարտադրէր ժամացոյցին չնայիլ, գիշերը ցերեկին խառնել, բայց Ռիչըրտ պզտիկ վարձատրութիւն չէր նկատեր այն իրողութիւնը, որ կրնար գործէն բացակայիլ երբ հարկ ծագէր առանց **պօսի** մը հաշիւ տալու: Ահա այդ իրաւունքը արժեցնելով ան կ'որոշէ անակնկալ հաճոյք մը պատճառել Օֆիկին, 1965-ի **Վեթրընզ Տէյը** անոր հետ անցընել, ամբողջ օրը զինք պտըտցնել, միասին ճաշել եւ ընթրել:

Առտուան 11-ին երբ զուարթ տրամադրութեամբ կը բարձրանայ սանդուխներէն, կը տեսնէ Ժանոն այն պահուն երբ ան դուրս կուգար Օֆիկին սենեակէն մինչ կիսաբաց դրան մէջէն ժանեկազարդ ու թափանցիկ շրջազգեստով Օֆիկին ձայնը կը մարմրէր. **«Պա՛յ, հա՛ն»**:

Ռիչըրտ ուզեր էր հաւատալ Օֆիկին: Կադանդին Ժանոն Ռեմինկըն գրամփքենայ մը նուիրած էր Օֆիկին եւ հիմա եկած էր... Ժապաւէնը փոխելու եւ տառերը մաքրելու: Դէպքէն գրեթէ քառասուն տարի ետք, Մարիամ համոզուած էր, որ եղբայրը շատո՛նց պէտք է նկատած ըլլար Օֆիկին փոփոխութիւնը, որովհետեւ ան յաճախ կը բացակայէր եկեղեցիէն դասերը պատրուակելով եւ չէր ուզեր որ Ժանոն մօր պատրաստած կերակուրները սենեակ տանէր: «Քու սերդ զիս կը խեղդէ», ըսած էր Ռիչըրտին երեկոյ մը, **«այ նիստ մայ սփէյս»**, երբ եղբայրը զգուշութեամբ ակնարկած էր սենեակին մէջ տիրող տարօրինակ հոտին, որ ծխախոտէն տարբեր էր:

Ռիչըրտ, կուրցած իր սերէն, չէր հասկցած այդ խօսքին իմաստը, բայց Օֆիկ յստակացուցած էր միտքը. «Ժանո՛ն ալ զիս կը սիրէ, Ռիչըրտ, եթէ ուզես կրնաք զիս բաժնել ձեր

միջեւ... ինք համաձայն է»:

– Եղբայրս ուշ, բայց շա՛տ աղուոր լուսաբանուեցաւ, ըսաւ Մարիամ գլուխին հետ համընթաց շարժելով ձախ ոտքին վրայ նետած ոտքը: Ժանոն անհետացաւ դրամատան հաշիւին հետ: Հիմա կը հասկնա՞ս, խնամի... դուն ըլլայիր ինչպէ՞ս կը վարուէիր Աստուծոյ եւ Հայ Եկեղեցիին հետ: Պիտի ուզէի՞ր լսել հայու անուն:

– Իսկ Օֆիկը... ի՞նչ եղաւ Օֆիկը:

Խնամի Մարիամին արագահարուածին դիմանալու համար պէտք է պողպատէ շինուած ըլլայի: Գրեթէ կէս գիշեր էր երբ մեկնեցայ սրտաբէկ: Յաջորդող օրերուն եւ շաբաթներուն երբեմն յիշեցի Չարլին: Իր մասին լուր մը չունենալս կը զօրացնէր յոյսս, թէ կրնար գտնուիլ դարմանումի նոր եղանակ մը եթէ ոչ անոր կեանքը փրկելու՝ գէթ զինք դատապարտեալի կարգավիճակէն դուրս հանելու համար:

Զարմանալիօրէն մտածումներուս առարկան աւելի Օֆիկն էր, շէնքը տապալող ուժանակը, որ նախ պայթեցուցած էր հիմը եւ բացած լայն փոսին մէջ կլանած փլած յարկերուն ջարդուած քարերն ու մոխիրը:

Բայց Օֆիկ ի՛նք ալ զոհ մը պէտք է եղած ըլլար, որովհետեւ, խնամի Մարիամին բառերով, անոր ընթացքը կրթեալ էր, ստացական, Հալէպի ապրանք չէր:

Ամերիկան վճռած էր կուսութիւնը կորսնցնել պիթըր-գային կեղծամով Էլվիսեան թփրտացող ազդրերու միջեւ: Ամէն ինչ ընդունելի դարձած էր, ամէն ինչ պէտք է փորձուէր, պէտք է պեղուէր մանաւանդ ուղեղը, իջնել անոր խորերը... խոտերու օգնութեամբ, հոն մթերուած երջանկութեան ճաճանչները գտնելու եւ բռնելու համար:

Օֆիկ քանի մը անգամ ներկայ եղած էր գոլէճին ուսանողական միութեան կազմակերպած հոգեբանութեան լսարաններուն: Զինք կախարդած էր Հարվըրտ Համալսա-

բանի նախկին դասախօս տոքթոր Թիմըթի Լիրին, **Տլաուըր Ճեներեյշընի** կուռքը, հեշտամոլ փիլիսոփայութեան առաքեալը: Եւ Օֆիկ երբեմն չարաճճի ժպիտով մը պատգամած էր Ռիչըրտին—«**Մէյք լավ, նաթ ուօր, տիըր**»:

Վիեթնամի պատերազմին արհաւիրքը խնայուած էր Մարիամենց: Բայց Վիեթքոնկի գնդակներէն հազարաւոր մղոն հեռու, Նիւ Ճրզիի Ֆորթ Լի աւանին յօրանջող թաղերէն մէկուն մէջ, Ռիչըրտ՝ վիրաւոր եւ խելակորոյս, անմիջապէս ինկեր էր պրութինցի Էսթըրին գիրկը, որուն պտուղն էր հէք Չարլին:

* * *

Ապրիլի առաջին Ուրբաթն է, յետ միջօրէի ժամը 4-ի մօտ: Ինքնաշարժս կը տեղաւորեմ փողոցը, Ռիչըրտին տան առջեւի մայթին զուգահեռ: Այդ առաւօտ խնամի Մարիամ պնդած էր որ այցելէի Չարլիին, եթէ կ'ուզէի զինք տեսնել վերջին անգամ ըլլալով քանի որ վիճակը վատթարացած էր, թերեւս միայն ժամեր կը բաժնէին կեանքը մահէն կամ անասելի տառապանքը յաւիտենական հանգիստէն:

Տունէն դուրս կուգար գրաւիչ կին մը շագանակագոյն մազերը փռած ուսերուն, վերամբարձ կուրծքով եւ բարեձեւ սրունքներով: Քովէն կը քալէր Էհուտը ականջին բան մը փսփսալով: Բաց դռնէն ներս մտայ: Ռաքէլ, որ զբաղած էր սեղանին վրայ դրուած եօթնաստեղ աշտանակին մոմերը տեղաւորելով, զիս ճանչցաւ:

– Հրամմէ, դուն Միրելմին փաստաբանն ես, չէ՞: Ռիչըրտ վերն է, Չարլիին մօտ:

Կիսամութ սենեակին մէջտեղ Չարլիին ուռած մարմինը գրաւած էր անկողինին երկու-երրորդը: Անշարժ էր, բացի աչքերէն, որոնք քանի մը երկվայրկեանը անգամ մը կը բացուէին, կը դառնային, կը շրջէին ու յոգնած՝ կը փակուէին:

Ռիչըրտ, որ քովը նստած կուլար, ոտքի ելաւ զիս տեսնելուն:

– Ներս մտած ատենդ տեսա՞ր այդ **պիչը**: Նաւա՛ն էր, տգրուկը, ըսաւ աչքերը սրբելով: Էհուտ զայն փակցուցած էր տղուս: Հաշիւներ ունէր...

– Ինչո՞ւ հոս էր. ամուսնալուծուած չե՞ն...

Նաւան եկեր էր Չարլիին փափաքով, ինձմէ կէս ժամ առաջ. եկեր էր նախկին ամուսինին վերջին կամքը յարգելու եւ... եւ... եւ անոր երեսն ի վար քնքշօրէն ըսեր հատիկ-հատիկ. «**Սուիթհարթ**... գիտես... քեզ երբեք չեմ սիրած... չեմ սիրեր հիմա: **Սորրի**, պիտի չկրնամ ներկայ ըլլալ թաղումիդ... Բայց շատ կ'ուզէի փոխան ծաղիկի նուէր մը տալ նախասիրած **Չերիթիդ**»:

Այս աշխարհին մէջ Չարլիին ներկայութեան միակ փաստը աչքերն էին—ո՞վ գիտէ, թերեւս անոնք Նաւան է որ կը փնտռէին—եւ մարմնին հեղուկները, որոնք, ըստ Ռիչըրտին, որեւէ անցք չունենալով դուրս կը ցատկէին սրունքներուն մաշկէն:

– Չարլին լսե՞ց **պիչին** ըսածները, հարցուցի:

– Չեմ գիտեր, չեմ կարծեր...

Առանց տատամսելու եւ առանց բառ մը ըսելու սենեակէն դուրս ելայ, վազեցի դէպի ինքնաշարժս եւ ձայնագիր մեքենաս ու սիրած երգերուս երիզն առնելով վերադարձայ: Էհուտ ալ հիմա հոն էր: Ան եւ Ռիչըրտ դէմ առ դէմ Չարլիին անկողնին վրայէն նայուածքներով կը խօսէին իրարու հետ, բայց կացութեան տէրը ե՛ս էի: Անտարբեր շրջապատիս՝ սեղմեցի կոճակը:

Երբ որ բացուին դռներն յուսոյ

եւ մեր երկրէն փախ տայ ձմեռն

Չայնը, դանդաղ, վալսի կամ քայլերգի մը կշռոյթով ալեծածան կը բարձրանայ հայոց աշխարհի լեռներն ի վեր,

կ'իջնէ վար ու կը նաւարկէ աչքերուս լիճին մէջ՝
տեսողութեանս ծիրէն դուրս ձգելով Էհուտն ու Ռիչըրտը:

Չքնաղ երկիրս մեր Արմենիոյ

երբ փայլէ իւր քաղցրիկ օրեր...

Չարլիին այտերը կծկուիլ սկսան. ինծի թուեցաւ որ կը
փորձէր բան մը ըսել կամ ընել: Երեքս ծոեցանք անկողինին
վրայ: Նկատեցի որ ժպտիլ կը ջանար երբ աչքերը ոլորելէն
հեռաւոր աշխարհէ մը կըրցաւ ձայնը լսելի ընել:

– Իգ... իգ տիս... պա-տա-պատա-րա՞գ...

– Եէս, սան, եէ՛ս, գոչեց Ռիչըրտ այնպիսի ուրախու-
թեամբ որ կարծես հրաշքի մը ականատես կ'ըլլար:

Միսալ չէին հայր եւ որդի: Պատարագն ու թաղմանական
մեղեդիները գացողին եւ մնացողին յուսոյ դռներ բանալու
համար են:

Ցանկամ տեսնել զիմ Կիլիկիա՝

աշխարհն որ ինձ ետուր արեւ:

Աղուոր, շա՛տ աղուոր երանութիւն մը տարածուեցաւ
Չարլիին դէմքին վրայ: Շապիկ հագած օրե՞րը, թէ իր
«ասած», բայց զինք չմոռցող Հայը ասղնտած էին դէռ չստած
յիշողութիւնը:

Մեկնած պահուս, դրան մօտ, բոլորովին անակնկալ
կերպով Ռիչըրտ վզիս փաթթուելով **Փլիզ**, ըսաւ, հայր սուրբը
կանչէ, թող շուտով գայ եւ մանչուկիս **գըմիւնէրն** տայ: Պէտք
է խօսիմ հետը: Եւ դառնալով Ռաքէլին՝ այս երեկոյ եւ
այսուհետեւ մոմերդ վառել չկայ... հասկցա՞ր:

Մարտ 2007

Ֆորթ Լի, ՆՃ

ԲԱՐԻ ԵՐԵՎՈՅ, ՍՏՈՒԵՐՆԵՐ

Ինչո՞վ տարբեր էին Սառան եւ Թինան, հարց տուաւ ինք-իրեն Հովիկ Արապեանը, որ թէւ երկու տարիէ ի վեր հանգստեան կոչուած էր, բայց դարձեալ պէտք զգացած էր արձակուրդի մը եւ հիմա զայն կը վայելէր պարտեզին նստարանին վրայ, Արարատին դիմաց, ձախ ձեռքին փիցցայի շերտ մը, կողքին իրմէ անբաժան քոքա-քոլայի թիթեղը:

Շատ կանուխէն տարեկան արձակուրդը իրեն համար եղած էր արարողութիւն մը: Անոր մասին կը մտածէր տարին 365 օր, զայն կը ծրագրէր յետին մանրամասնութեամբ եւ կը գործադրէր կրօնական ջերմեռանդութեամբ: Տարի չէր եղած որ ինքզինք զրկած ըլլար արձակուրդէն նոյնիսկ երբ նիւթական պայմանները ձեռնտու չէին:

Ուրախ էր կրկին Երեւան գտնուելուն: Օրուան յայտագիրը պատրաստ էր: Հոգ չունէր, հոգ ընել չէր սիրած, բայց սա երկու ներկայանալի աղջիկները, որոնք տաք արեւին տակ կը քալէին՝ թելէ մը կախուած հանդիսական սեւ հագուստով, ձուածէւ բացուածքներէն կիսալուսիններուն շարժող շուքը իրենց թելերուն տակ, սիրտը թունդ հանած էին, որովհետեւ շատ նման էին Սառային եւ Թինային, որոնց հանդիպած էր Նիւ Եորքի մէջ, գրեթէ քառորդ դար առաջ, իրարմէ վեց ամիս հեռաւորութեամբ:

Ամբողջ կեանքը եղած էր վազվզուք մը Միջին Արեւելքէն Եւրոպա եւ Լատին Ամերիկա՝ ասպարեզին պահանջները դիմագրաւելու արշաւին մէջ առիթ չտալով ամուսնութեան գաղափարին ծլարձակման: Թերեւս գործին այդ աստիճան փարումն ու նուիրումը հետեւանք էին ընտանեկան

պատասխանատուութիւններէ խուսափելու հակումին: Յամենայն դէպս քառասունին բարեւ կուտար երբ հասաւ Քենըտի օդակայանը, ուր զինք դիմաւորելու եկած էր հին դասընկերուհիներէն Արշոյին քսանամեայ տղան:

Յաջորդող շաբաթներուն եւ ամիսներուն զինք հիւրասիրեցին Նիւ Եորք-Նիւ Ճրզիի շրջանը հաստատուած իր դասընկերներն ու բարեկամները: Ծանօթացաւ անոնց ընտանիքի անդամներուն, համեղ ճաշերուն հետ ճաշակեց բաւական խրատ եւ քարոզ, որոնց նիւթը ընտանիք կազմելու պատգամն էր:

Գործը սահուն կ'ընթանար, որովհետեւ կը պաշտօնավարէր Լոնտոնի գործատիրոջ Նիւ Եորքի գրասենեակը: Սկսած էր փնտռել ազգային ձեռնարկներն ու հաւաքոյթները, ներկայ ըլլալ, ժողովներու մասնակցիլ: Թատերական ներկայացումի մը աւարտին, թեթեւ հիւրասիրութեան պահուն, Արշոն մօտեցաւ եւ ցոյց տալով կողքին կանգնած ժպտուն աղջիկն ու անոր փեշէն կախուած երկու-երեք տարու մանուկը, «Ծանօթացիր», ըսաւ, «կատակաբանին կիներն ու զաւակը»:

Ապշեցաւ: Չկրցաւ հաւատալ: Կատակաբանը իր ամենէն մտերիմ ընկերն էր, միասին ապրած էին Լոնտոն: Եթէ մէկը կար որ վճռած էր չամուսնանալ, ա՛ն էր: Պատանութեան այդ անունով մկրտած էին զինք դպրոցին մէջ: Արդար տիտղոս մը չէր, ինչպէս աշակերտներու «կախած» անունները գրեթէ միշտ չեն: Կանխահաս դերասան-բեմադրիչ մըն էր կատակաբանը, որ հետագային նուաճեց իր արուեստին գագաթը՝ գիշերները Լոնտոնի **փապերուն** մէջ իրեն հետ ուխտքի մատոռուակելով **լէտիներուն**, իրապէս ազնուական ծագումով անգլիացի աղջիկներուն, որոնց համար կարծես ամերիկացին ստեղծած է **տայմ ք տազըն** խօսքը:

Այդ գիշերուան անակնկալ ծանօթութիւնը կատակաբանին կնոջ հետ պատճառ եղաւ որ մտքին պաստառին վրայ

տարբեր երևույթ մը առնէր Սառան, իր նոր բարեկամուհին, որուն հանդիպած էր երկու ամիս առաջ, Մայրիլ 24-ի Թայմզ Սթրուերի ժողովրդական հաւաքին: Կարգապահական ջոկատին պետն էր ինք այդ օր, երբ շտապ օգնութեան առաջին միջոցները կիրարկած էր ուշքի բերելու համար նուաղած եօթանասուննոց տիկին մը, որ ձեռքին մէջ ամուր սեղմած էր սիրամարգի երկու փետուրներով լայնածիր սեւ գլխարկ մը...: Մօր նկատմամբ իր վերաբերումը Սառան անմիջապէս վարձատրած էր ճաշի մը հրաւերով: «Ե՛ս պիտի եփեմ քեզի համար», ըսած էր աչքերուն մէջ աղուոր խոստում մը, զոր միայն ապուշ տղաքը չեն տեսներ:

Յուզիչ էր Սառային պատմութիւնը: Հասկնալէ աւելի՝ Հովիկ հոգեկան կապ մը զգացած էր անոր հետ: Սառան կուգար հանրանուէր ընտանիքէ մը, որուն փառքը կերտուած էր դաժան պայմաններու մէջ անմնացորդ եւ այլամերժ ծառայութեան կղմինտրներով: Փոքր տարիքին լքուած հօրմէն եւ ատեն մը կապերը խզած ժողովուրդէն, իրեն հետ նորեկի քայլեր կ'առնէր հայկական շրջանակի մէջ ներկայանալով իբրեւ նշանածը մինչեւ ճակատագրական գիշերը երբ առանց ձայնի ձգեց Սառային յարկաբաժինը, արագօրէն հեռացաւ եւ մինչեւ լոյս երախտագիտութիւն յայտնեց... Պիլիին: «Երախտապարտ եմ, Պիլի, իմ ոսկի ընկեր», կրկներ էր ուխտքիի ամէն մէկ ումպին հետ:

Պիլին գամփռ մըն էր, սարսափազդու շուն մը, հսկայ գլուխով եւ ոսկեգոյն մազերով: Չգիտցողը զայն դիւրաւ կրնար շփոթել առիւծի հետ: Անոր տիրուհին Սառան էր, որ կը բնակէր Սփրինկ Կարտընզ, Նիւ Եորք քաղաքին մօտ անցեալ օրերուն փառքը յիշող արուարձան մը: Հովիկին երախտագիտութիւնը որեւէ առնչութիւն չունէր շուներուն ներբողեալ ծառայութիւններէն որեւէ մէկուն հետ: Պիլին երբեք հաճելի ընկերակից մը չէր եղած իրեն, զինք չէր պաշտպանած յարձակողներու դէմ, կեանքը չէր փրկած

ահարկու հաջոցին ազդարարութեամբ:

Հովիկ երբեք շան կողմէ չէր դիմաւորուած գոհունակութեամբ, պոչին երերումով: Ինք որ հաջոցէն կը զգար թէ մերժելի մէկն է, երախտապարտ էր մտերմութեան համար, գոր այդ գիշեր Պիլին նուիրեց ո՛չ թէ իրեն, այլ... օտարականի մը: Կօշիկները հանած հազիւ պատրաստուած էր ննջասենեակ մտնելու, զանգը հնչեց: Պիլին տեղէն չցատկեց ընդոստ, սովորական վայնասունը չարձակեց եւ երբ անակնկալ այցելուն պաղ բարեւ մը տալով ներս մտաւ եւ նստաւ բազմոցին վրայ, գնաց եւ անոր ծունկին վրայ հանգչեցուց գլուխը գառնուկի հեզութեամբ:

Ո՞վ էր այցելուն. կարելոր չէր: Ծանօթացումի հարկ չէր մնացած: Ինք չէր ճանչնար, կը բաւէր որ Պիլի՛ն կը ճանչնար: Սառան բան չէր ըսած անոր մասին եւ բան չըսաւ այդ գիշեր. խօսելու պարտականութիւնը թողած էր... Պիլիին:

Հովիկ ցնցուած էր: Կեանքին մէջ առաջին անգամ ըլլալով ճամբայ ելած էր տուն-տեղ կազմելու եւ ահա կը գտնուէր մտքին ծայրէն չանցած կացութեան մը դիմաց: Քանի մը օր գործի չգնաց, բայց շուտով ինքզինք գտաւ: Ճակատագրապաշտ էր եւ ազնիւ: Հարցնողներուն երկու տեսակ պատասխան տուաւ: Մէկը՝ «ըլլալիքը պիտի ըլլայ», միւսը՝ «**խսմէթ** չէ եղեր»: Եւ իրեն թուեցաւ որ մարդիկ զգացած էին իր ցաւը եւ ազնուաբար խուսափած հարցուփորձը երկարելէ:

Երկու աղջիկները հեռացած էին իր տեսողութենէն երբ Հովիկ քոքա-քուլայի ումպով մը փիցցայի վերջին կտորը կոկորդէն վար քշելէ առաջ, թիթեղը ձեռքին, յիշեց Պիլին, որ հաւանաբար շատո՛նց հող դարձած էր:

– Կենացդ, ոսկի՛ ընկեր...

Երբեք չէր մտածած որ կրնար սխալած ըլլալ իր ենթադրութեանց մէջ եւ հետեւաբար չէր զոջացած Սառային հետ յարաբերութիւնը դանակի պէս կտրած ըլլալուն:

Պատահեցաւ նաեւ որ դէպքէն քանի մը ամիս ետք նոր սէր մը հետապնդելու ճիգը բնական ընթացքով մը մոռցնել տուած էր Սառան:

Հովիկ Թինային հանդիպեցաւ Արշոյին տան մէջ Զատիկին յաջորդող կիրակին:

– Քրիստոս յարեաւ ի մեռելոց, ըսաւ Հովիկ ձեռքը երկարելով անծանօթ կնոջ:

– Օրնալ է արթինը Քրիստոսի... պատասխանեց կինը բերնին մէջ կլոր գետնախնձոր մը դարձնելու պէս:

– Թինային լա՛ւ հայերէն պիտի սորվեցնենք, անմիջապէս միջամտեց Արշօ որպէսզի Հովիկ չկարծէր թէ յիմար կատակի մը գոհն էր:

Իրեն գրեթէ տարեկից եւ հասակակից կին մըն էր ան, գաւակը հայ ունետոր ձեռնարկատիրոջ մը, որ պոլսեցի կնոջ անակնկալ մահէն ետք տասնամեայ աղջիկը մայրական խնամքէ չզրկելու մտահոգութեամբ վերամուսնացած էր անգլիուհիի մը հետ եւ տարիներ առաջ հաստատուած Պոմպէյ: Ըստ հաղորդուածին, Թինան Մանհաթընի մէջ սեփականատէրն էր կանանց արդուգարդի առարկաներ ներածող եւ արտածող ընկերութեան մը, որ տէրն էր երկու վաճառանիշներու—Գարմէն Քիյեար եւ Մարչէլլօ:

«Այսքան սպասեցիր, տղաս, յուսամ շիտակ ընտրութիւն մը ըրած ես», ըսած էր մայրը հեռաձայնէն երբ պատմած էր Թինային հետ հանդիպումը: Մօրը ուզած հարսը պիտի ընէր զինք, որովհետեւ հայկական ծագումէն թելադրուած զգացումներն ու ինքնութեան իմացութիւնը լաւ էին: Կը խորհէր որ պիտի կրնար անոնց վրայ յենելով առաջին հերթին կարգի դնել Թինային արտառոց հայերէնը, որ կուշտ ու կուռ կը խնդացնէր խօսակիցը:

Բարեսիրաց պարահանդէսը լաւագոյն առիթն էր Թինան ներկայացնելու հայկական ընտիր շրջանակի մը: Ծանօթանալէն երկու օր ետք, շաբաթ իրիկուն երբ երկուքը սրահ

մտան, բարեկամներէն անոնք որ լուրը առած էին դրան առջեւ կը սպասէին դիմաւորելու Հովիկին նոր «աղջիկը»: Ջերմօրէն ընդունուեցան երկուքը եւ առաջնորդուեցան տէր եւ տիկին Ղազար Լազարեանին սեղանը: Պարոն Ղազար, որ հսկայ հարստութեան տէր բարեգործ ազգային մըն էր, համբաւաւոր իր քիչ մը կոպիտ խօսելակերպով, կը ճանչնար թէ՛ Հովիկին եւ թէ Թինային ծնողքը:

Մինչ ճաշը կը սպասարկուէր եւ նուագախումբին ամերիկացի երգիչը կ'երգէր իր նոր ստրված «Ծաղիկներ, ծաղիկներ, անթառամ ծաղիկներ» սիրուն երգը «դ» գիրը «կ» հնչելով, պարոն Ղազար գլուխը մօտեցուց Հովիկին ականջին. «Նայէ, տղաս», ըսաւ, «էշ չըլլաս, քեզի կ'ըսեմ կոր, **լիսընդու մի**, չըլլայ որ փախցնես...»: Հովիկ քմծիծաղով մը գլուխը շարժեց ի նշան հաւանութեան: Թէեւ գիտէր այս տեսակ խօսքերուն արժէքը, բայց վկայութիւնը կարելոր անձէ մըն էր վերջապէս:

Քանի մը շաբաթ ետք Թինան փոխադրուեցաւ Հովիկին բնակարանը, գնեց ննջասենեակի նոր կարասիներ, Հովիկին գաղափար մը տուաւ իր գործերուն մասին եւ նշանաւոր ճաշարանի մը մէջ ընթրիքի սեղանի մը շուրջ ծանօթացուց Գարմէն Քիյեարին, որմէ չորս տարի առաջ գնած էր ընկերութիւնը եւ զինք կը պահէր իբրեւ տնօրէն, եւ Մարչէլլօ Պոլսիզիին, որ հաշուակալն էր: Հաստատութեան կարգ մը ապրանքներուն վաճառանիշը անոնց անունն էր մասնաւոր արտօնութեամբ:

Մարչէլլոն իր մօտ կանչեց սպասեակը եւ մէկական խմիչք պատուիրեց նուագախումբին անդամներուն, որոնցմէ յատկապէս թմբկահարին բարեկամ էր: Յիշեց որ երկու տարի մտերիմ սենեակակիցներ եղած էին, թէ հակառակ լեռնցի կերպարանքին ան յարգած էր իր զգացումները, բայց վէճի մը պատճառաւ այլեւս իր կեանքին մաս չէր կազմեր եւ ինք կրցած էր էջը դարձնել...: Գինիի բաժակը բարձրացնելով

«Խմենք», ըսաւ Մարշէլլօ, «խմենք մեր ընտանիքին նոր անդամին կենացը»: Հովիկ շատ գոհ էր իրեն տրուած ուշադրութենէն եւ բնական գտաւ որ Թինային հաւատարիմ պաշտօնեաներուն ջերմ զգացումները իր վրան ալ տարածուէին:

Թինան բոլորովին նուիրուած էր գործին: Նոյնիսկ կիրակի օրերը գրասենեակ կ'երթար Գարմէնին հետ արտածումի ապրանքները ծրարելու: Հովիկին կեանքը մտաւ բնական հունի մէջ: Թէեւ ամուսնանալու ոչ մէկ ճնշում զգացեր էր Թինայէն, բայց մտածեց անորոշ կացութեան մէջ երկար չպահել զինք:

Ամառ գիշեր մը երբ միասին հասած էին Ճավից Սենթըրին դիմացը գտնուող նաւամատոյցը, Նիւ Ճրզիի ափը փոխադրող նաւուն քով Հովիկ ծունկի եկաւ Թինային առջեւ, գրպանէն հանեց թաւապատ տփիկը, բոնեց Թինային ձախ ձեռքը եւ ադամանդեայ մատանին սահեցնելով անոր մատնեմատին, արտասանեց կախարդական խօսքը, որուն ամէն կին կը սպասէ Ամերիկայի մէջ. «**Ուիլ ետ մերի մի՞**»: Ա՛լ այդ հանգրուանին ամերիկեան քաղաքակրթութեան պատմութիւնը չէ արձանագրած որ կին մը Ոչ պատասխանած ըլլայ: Բայց Թինային Այո-ն գուրկ էր ակնկալուած յուզումէն, ջերմութենէն, գիրկընդխառնումէն:

Նաւը շարժեցաւ դորդալէն: Հովիկ ետին նետեց ժխտական մտածումները ինչպէս նաւը՝ Հատսընի ալիքները: Գիշերուան տասն էր, օրուան յոգնութիւնը կրնար սպառիչ եղած ըլլալ, պահը վստահաբար անյարմար էր՝ հոգ չէ թէ տեսարանը վիպական, մտածեց: Այս ենթադրութիւնը հաստատուած զգաց լուսադէմին Թինային մարմնին մտերմութենէն: Աւելին՝ քանի մը օր ետք Թինան յայտնեց որ հայրը չափազանց գոհ մնացած ըլլալով իրենց ամուսնութեան որոշումէն դրկած էր կարեւոր գումար մը որպէսզի երկուքը շոայլօրէն տօնախմբեն իրենց հանդիպման կիսամեակը

Արուսյայի մէջ մէկ շաբաթ արձակուրդով:

Հովիկ երբ նկատել տուաւ որ ինք արդէն ծրագրած էր տարեդարձի արձակուրդ մը եւ թէ հայրը պէտք չէ որ անտեղի ծախքի մը ենթարկուէր, «Հոգ մի ըներ», ըսաւ Թինա, «կերպով մը երախտապարտ է, առաջին ամուսնութիւնս հնդիկին հետ զինք գրեթէ գերեզման տարաւ»: Եւ յետոյ աւելցուց որ իր փափաքն էր հրաւիրել Գարմէնն ու Մարչէլլոն իրենց հետ անցընելու արձակուրդը քանի որ այնքան նուիրումով կը ծառայեն գործին: Առաջարկը տարօրինակ էր: Իրենց առաջին արձակուրդը պիտի անցընէին եօթն օտար պոչերով...

– Եթէ կ'ուզես պաշտօնէաներդ վարձատրել, թող առանձին երթան. մեզի հետ գալու պէտք չունին, ըսաւ Հովիկ բարկութիւնը զսպելով:

– Կը մերժե՞ս առաջին խնդրանքս...

Սպառնալիքի սուրը կախուած էր օդին մէջ: Պէտք է ետ քայլ մը ընէր:

– Լաւ, ըսաւ, մամաս յիսուն տարիէ ի վեր արձակուրդի երես չէ տեսած: Կ'ըսեմ որ ան ալ գայ մեզի հետ:

– ...

Հովիկ չէր մոռցած Արուսյայի արձակուրդը, որ քանդած էր վերջին դղեակը իր երազին:

Երկու օրէ ի վեր Արուսյա էին, Գարիպեան ծովուն մէջ հոլանտական թագին ենթակայ կղզի մը, որ արձակուրդի հրաշալի վայր մըն է անոնց համար որ կը նախանձին աւագին սպիտակ սաւանին վրայ տարին տասներկու ամիս շփացած ծովուն հետ կենակցող ոսկի արեւէն:

Պանդոկին առջեւ մինչեւ ծովափ տարածուող աւազը ցանցնուած էր հովանոցներով եւ շարժական երկար նստարաններով, որոնք անկողինի նման կրնային բացուիլ ըստ կարիքի:

Ընդհանրապէս Թինան եւ Գարմէնը առաջինները

կ'ըլլային ծովափ գացող: Անոնք իրենց կիսամերկ մարմինները կը փռէին իրարու կից նստարաններու վրայ եւ երբեմն իրարու ձեռք կը բռնէին երբ կռնակի վրայ պառկած դիրքի մէջ ըլլային: Կէսօրուան մօտ կուգար տիկին Արուսեակը, Հովիկին մայրը, հետը աթոռ մը եւ կը նստէր չորս հովանոց անդին միշտ ուշադիր որ երկար շրջագգեստին ծայրերը ծածկէին կրունկները: Մարչէլլոն իրեն հետ Թինային մօտ կը բերէր Գարմէնին հինգ տարեկան աղջիկը՝ Լիլիանան ապա կ'երթար միանալու խումբ մը տղամարդոց, որոնք շուրջ հարիւր մէթր անդին տարօրինակ շարժումներ կ'ընէին երբ ոտքի էին, իսկ աւագին վրայ՝ երկարած կ'ըլլային գոյգ-գոյգ իրարու նկատմամբ այնքան ուշադիր, այնքան գորովալիք...

Հովիկ ծովափ կուգար կէսօրէ ետք ժամը չորսի մօտ երբ սենեակին մէջ կ'աւարտէր համակարգիչի աշխատանքը: Այդ օր գործը կանուխ վերջացուցած եկաւ եւ թեթեւ համբոյր մը դրոշմելով Թինային իւղոտած եւ արդէն սեւցած այտին գնաց երկարելու մօր քով գտնուող նստարանին վրայ: Զինք տեսնելուն տիկին Արուսեակ, երեսը կաս-կարմիր, խստութեամբ մը, որուն ծանօթ չէր Հովիկ, ըսաւ.

– Չէի ուզեր գալ, տղաս, ինչո՞ւ պնդեցիր... կաթուածահար պիտի ըլլամ... տուն երթալ կ'ուզեմ, ես հոս ի՞նչ գործ ունիմ...

Արուսեակի արեւը երկու օր կրակ թափած էր տիկին Արուսեակին սրտին մէջ եւ կրակ դարձուցած զինք: Հովիկ գիտէր թէ ի՞նչ մտածումներ կրնային տագնապեցուցած ըլլալ մայրը, բայց զգուշացած էր կրակին վրայ քարիւղ թափելէ: Չորս օր ալ կարելի էր համբերել...

Լիլիանան ջուրին եզերքէն վազելով թաց-թաց մօտեցաւ իրենց եւ մանկական համովիկ անմեղուրեամբ մը՝

– Գիտե՞ս, **կրէն մա**, ըսաւ, ես բախտաւոր եմ, երկու **մամի** ունիմ, **մամի** Գարմէն եւ **մամի** Թինա... ու ետ վազեց ալիքներուն քանդած աւագէ տունը վերականգնելու:

Տիկին Արուսեակ պետք չուներ մանուկին բերնով հարսնցուին խոստովանութեան: Տեսածը կը բաւեր: Լիլիանային յայտարարութիւնը թէեւ Հովիկին կասկածները չէր հաստատեր վերջնապէս, սակայն զօրաւոր պատճառ մը եղաւ անմիջապէս կտրուկ քայլ մը առնելու: Երթանք, մամա, ըսաւ, նամուս չէ մնացեր, եւ մայր ու տղայ, անխօս, առանց ետեւ նայելու, պանդոկ վերադարձան, հապճեպով առին իրենց պայուսակները եւ ուղղուեցան օդակայան:

Տարիներու ընթացքին, յատկապէս արձակուրդներուն, Հովիկ երբեմն ջանացած էր լուծել Թինային հանելուկը, վերլուծել անոր քայլերուն շարժառիթը, հակասական վարմունքին նշանակութիւնը, բայց ամէն անգամ մտածումները ասդին-անդին ցատկոտելով ի վերջոյ անհետացած էին հովէն քշուած թուղթի կտորներու նման: Հոս, հայրենի պարտեզին մէջ, Արարատին դիմաց, մէկ անգամէն անդրադարձաւ որ Թինան Արուպայի արձակուրդը կազմակերպած էր զինք սիրելուն , զինք իրապէս շահ տ սիրելուն համար...

Մայիս 2007

Ֆորթ Լի, ՆՃ

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Իրերայաջորդ գանգերէն ետք երբ գիշերուան 10-ին Մասիս դժկամութեամբ վերցուց հեռախօսին ընկալուչը, չճանչցաւ «Ալօ»ին տէրը: Բնագոյաբար ընկալուչը տեղը պիտի դներ, առանց բառ մը արտասանելու, բայց ձայնը յամառեցաւ.

– Ալօ՛... ա՛լօ... Մասիս... Հայաստա՛նն է... քո՛ Հայաստանն է խօսում... կը յիշե՞ս...

Պահ մը յամեցաւ, ձայնը ծանօթ չէր, բայց ուներ շեշտ մը, որուն յիշատակը երբեմն այցելած էր իրեն: Յիշեց... Բայց ա՞ն էր:

– Քիչ մըն ալ խօսէ, ըսաւ:

– Փապէ՛տա՛ն... մագերուս փունջը կարմիր ժապաւէնով...

Ա՛ն էր: Հիմա ադ-պղպղէլ հայերէնով մը խօսողը ազգային վարժարանին մէջ իր հին դասընկերուհին էր, Մատլէնը, որուն բարի ճանապարհ մաղթելու համար, 45 տարի առաջ գացած էր Ադեքսանդրիոյ **կիւմրիւկը** եւ հոն, քարափին վրայ, նազը քաշող կրտսեր հօրեղբօր արտօնութեամբ վառած կէանքին առաջին սիկատէթը, «հայկական» ճերմակ, կէսը պարապ **պապիրոսը**, որմէ լման տուփ մը իր ալ ոտքին առջեւ ինկած էր երկնքէն: Սպիտակափառ Փոպետայի նաւագները վերէն գուարթօրէն կ'ողջունէին վարը մնացած խեղճերը...:

Դժբախտ կացութեան մը մասին խորհուրդ հարցնելու նպատակով հպարտ Հայաստանը կը հեռաձայնէր Լոս Անճելըսէն, ուր հաստատուած էր երեք զաւակներով: Երեց որդին բանտ ինկած էր ոստիկան մը սպաննած ըլլալու ամբաստանութեամբ:

– Հաւատա՛, Մասիս, Վաչիկս անմեղ է... բոլորովին անմեղ... Աստուած վկայ... քանի մը անգամ կրկնեց Հայաստանը հեկեկալով...– Համալսարանի մաթեմաթիկայի բաժնում է սովորում, փայլուն երիտասարդ է... շա՛տ փայլուն...

Մասիս դէպքին մասին հարցումներ ուղղեց, առաւ պաշտպան փաստաբանին անունն ու հասցէն, յուսադրիչ եւ քաջալերական խօսքեր ըրաւ եւ խոստացաւ առաջին պատեհութեամբ այցելել անոր:

Սին խոստում մը չէր, որովհետեւ գործի բերմամբ յաճախ Գալիֆորնիա կ'երթար եւ յաջորդ այցելութիւնը երկու օր ետք էր: Լոս Անճելըսի մէջ տեսնուեցաւ փաստաբանին հետ, այցելեց Վաչիկին, որ կը մնար գաւառական բանտը եւ ծանօթացաւ ոստիկանութեան տեղեկագրին եւ փաստերուն:

Սիրային ցաւալի եռանկիւնի մը մէկ կողմն էր Վաչիկ: Միւս կողմը՝ իրեն մրցակից Ուինսթընը, ծագումով անգլիացի մտերիմ բարեկամը, որուն նախկին նշանածը հիմա դարձած էր ի՛ր ընկերուհին մինչ Ուինսթըն աշխատանք կը տանէր վերագրաւելու աղջկան սիրտը... յաջողութեան որոշ նշաններով:

Յանուն իրենց բարեկամութեան Վաչիկ համաձայներ էր ենթարկուելու Ուինսթընի **անքրլին** իրաւարարութեան: Որոշեալ օրը, առաւօտեան, Վաչիկ ընկերակցութեամբ Ուինսթընի կառատունէն կ'առնէ ինքնաշարժը եւ կ'ուղղուի դէպի Սանթա Մոնիքայի ժամադրավայրը հանդիպելու **անքրլին**:

Ուիլշըրէն գալով հազիւ ձախ դարձած Լա Սիենեկայի վրայ, ոստիկանը կը կանգնեցնէ ինքնաշարժը: Կը հարցովորձէ Վաչիկը ապա կը հրահանգէ որ երկու տղաքը դուրս գան: Արագօրէն հպանցելէ ետք անոնց մարմինները, կը պահանջէ բանալ ինքնաշարժին յետսամասը: Ուինսթըն ջղային շարժումով մը կը բողոքէ.

– Չեմ արտօներ:

– Շաթ ափ, փիմփ...

Անմարսելի բառը հազիւ ոստիկանին բերնէն դուրս բռնած, երկվայրկեանի մը մէջ Ուինսթըն ատրճանակը կը պարպէ անոր գլխուն եւ կուրծքին:

Ոստիկանատան մէջ ինքնաշարժին խուզարկութիւնը երեւան հաներ էր 5 փառնոտ մարիուանա, 2 փառնոտ քոքային եւ 2000 հատ մեթանֆէթամին բոլորը խնամքով ծրարուած քաուչուկէ պահեստի անիւին մէջ: Նաեւ մսագործի դանակ մը, սղոց մը եւ շինութեան թափօնի երեք հատ փլասթիք տոկուն տոպրակներ:

Բայց ինչո՞ւ Վաչիկ ամբաստանուած էր առաջին աստիճանի մարդասպանութեամբ երբ ինք չէր ատրճանակին բլթակը քաշողը: Ըստ դաւադրութեան օրէնքին, ծանր ոճիւրի մը պարագային դաւակիցը նոյնքան մեղաւոր է որքան գլխաւոր դերակատարը: Ոստիկանին սպանութիւնը հետեւած էր թմրադեղ վաճառելու ոճրային դաւին: Վաչիկ եւ Ուինսթըն անխիղճ եւ ստորին մարդասպաններ էին...

Դէպքին հետաքննութեան մէջ Մասիս նկատեց չափազանց կարեւոր անտեսում մը: Անհրաժեշտ խստութեամբ եւ մանրամասնութեամբ չէր քննուած թմրադեղին ստացումին շղթան: Ինքնաշարժը նորոգութեան համար երեք օր գտնուած էր Ուինսթընի եղբօր կառատունը... Ուինսթըն խորհած էր որ բռնուելու պարագային, ինքնաշարժին տէրը Վաչիկն էր, վարորդը Վաչիկն էր, հետեւաբար ա՛ն էր նաեւ տէրը թմրադեղին, որուն գոյութենէն ինք անշուշտ լուր չունէր...: Իսկ եթէ Ամենակալին ողորմութեամբ Սանթա Մոնիքայի մէջ հանդիպումը կայանար **անքրլին** հետ, Վաչիկ պիտի հանգչէր տոպրակներուն մէջ՝ կտոր-կտոր եւ ինք, հարստացած, երջանիկ կեանք մը պիտի ապրէր ազնուական հոգեհատորին հետ... զբօսանաւերու վրայ:

* * *

Լերան գագաթը, բարեկամի մը տան պարտէզին մէջ,

ամրան գով գիշերը քով-քովի բերած էր Մասիսն ու Հայաստանը տօնախմբելու Վաչիկին ազատ արձակումն ու կամրջելու զիրենք բաժնած 45 տարիները:

Իրենց համակրությունը, քիչ մըն ալ աւելին, սկսած էր հինգերորդ դասարանէն: Գրատախտակին վերեւ, ուսուցչին ամպիոնին քով կախուած էր Խորէն Մուրատբէկեան Կաթողիկոսին սեւ-ճերմակ նկարը: Անուան տակ գրուած էր «նահատակ»: Բառին իմաստը չէին գիտեր: Այլ դասարաներու մէջ ալ նկարներ կային. մէկը՝ Անդրանիկ, միւսը՝ Պօղոս Նուպար անուններով, առանց ածականի կամ տիտղոսի: Մէկը՝ պէխին ծայրը վեր թռած, շանթարձակ աչքերով, պատրաստ յարձակելու, միւսը՝ պէխը կախ, ֆէտով եւ սիրահար նայուածքով: Ո՞վ էին այդ մարդիկը:

Անոնց մասին պատմութեան եւ աշխարհագրութեան վաստակաւոր ուսուցիչ Արշակ Մահտեսեանը բան չէր ըսած, բայց այդ շատ բարի, ճեփ-ճերմակ մագերով պարթեւահասակ մարդը գիտէր ուսուցման մէջ նիւթը աշխոյժ բառերու, նկարի կամ շարժումներու օգնութեամբ բացատրելու կարեւորութիւնը:

Վարդանանց Տօնին դասարանին մէջ ինք Վարդան կը դառնար եւ իրմէ անբաժան քանակը կը զարներ Մուշկան Նիւսալաւուրտի փիղին փորին, որուն տակ ինկած էր Քաջն Վարդան: Ամէն Ապրիլեան սգահանդէսի ինք էր ճառախօսը: Կը քալէր բեմին մէկ ծայրէն միւսը երբեմն թաց աչքերը սրբելով—Մեր տունն ու տեղը առին մեզմէ, ձորերն ի վար նետեցին, սուրէ անցուցին, Եփրատը մեր արիւնով ներկուեցաւ...

Օր մը, աշխարհագրութեան պահուն, տարրալուծարանէն, ուր կը պահուէին մարդակազմութեան եւ բուսաբանութեան մեծադիր գունաւոր նկարներն ու երկիրներու քարտէսներ, հետը բերած էր Հայաստանի քարտէսը: Զայն հանդիսաւորապէս բանալէ ետք կախած էր գրատախտակէն եւ

քանակին ծայրը պտըտցնելով սահմանին շուրջ հարցուցած.

- Ի՞նչ բանի կը նմանցնէք Հայաստանը:

Քար լռութիւն:

Մասիսն էր մատ վերցնողը.

- Գեղեցիկ աղջկան մը գլուխը՝ ձախ կողմէն... Մատլէնին կը նմանի, պարոն...

Այդ օրուրնէ Մատլէնը դպրոցին մէջ մկրտուեցաւ Հայաստան: Ու երբ Հայաստանը Հայաստան գնաց, դրկեց ընդարձակ նամակ մը՝ լեցուն կարօտի զգացումներով եւ ուղղագրական սխալներով: Անոր նիշը միշտ 10 + էր. հիմա ինչո՞ւ այդքան սխալ այդքան կարճ ժամանակուան մէջ... Հայաստան իր հօր բարեւներն ալ կը հաղորդէր Մասիսին հօր, որ շատերու նման իրենց ալ օժանդակած էր փոխադրական տախտակէ սնտուկներու եւ **չէմպերներու** սիրայօժար հայթայթումով: Նամակը վերջացուցած էր համբուրելով աջը Մասիսին մեծ հօր, որ 1929-էն ի վեր կը հանգչէր Շաթալիի ազգային գերեզմանատունը, Ս. Գեորգ մատրան մօտ, Սուրէն Պարթեւեանի դրացնութեան մէջ...

- Հայրդ կարողացե՞լ էր հասկանալ, հարցուց Հայաստանը: Էդ տողը հա՛յրս ուզեց որ աւելցնեմ:

Անշուշտ հասկցած էր: Մասիսին մօրենական մեծ հայրը կ'ուզէր ներգաղթել, բայց ոչ առանց աղջկան, իսկ հայրը, շուկայի մարդ, **կարանթի** ուզեր էր ներգաղթի կոմիտէին ներկայացուցիչէն գիտնալով հանդերձ որ վիճակահանութեան թիւերը շահած բախտաւորները միայն ներգաղթելու արտօնութիւն կը ստանային:

- Ընկեր ջան, հայրենիք երթանք, լա՛ւ, բայց եթէ ուզեմ **պապա** Ստալինը թոյլ կուտա՞յ որ 9 հոգինոց ընտանիքովս վերադառնամ... ի՛մ հաշուոյս:

- Այ մարդ, դու գծուե՞լ ես, դրախտից ո՞վ կ'ուզենայ դուրս գալ, պատասխանած էր ներկայացուցիչը:

Հայաստանին նամակը հաստատեր էր հօր ենթադրու-

թիւնը, բայց ան գուժկան լուրերուն դիմաց ո՛չ իր «իմաստութիւնը» գովաբանած էր, ոչ ալ փորձած սեւով ներկել Հայաստանը:

– Բայց չեմ հասկնար, Հայաստան, շարունակեց Մասիս, ես քառասուն տարի ապրած եմ կապիտալիստական կարգի տակ, դուն՝ կոմունիստական: Ես տունի տէր եմ, դուն ալ: Ես ինքնաշարժ ունիմ, դուն ալ: Ես ցաւեր ունիմ, դուն ալ: Ես պիտի մեռնիմ, դուն ալ: Ի՞նչ է քու եւ իմ տարբերութիւնը: Ինչո՞ւ ներգաղթողները ջախջախիչ մեծամասնութեամբ անպայման գոհ կը ներկայանան:

– Տարբերութիւնը չգիտե՞ս. հէնց մի դիմացդ նայէ:

Չորին ծայրը Հովիտուտ մայրուղիին սեւ գետին վրայ նետուած էին շարժող լոյսերու երկար պարաններ մինչ միւս կողմը տաշուած լեռան տեղ բարձրացած Եունիվըրսըլ Սթիւտիոն օրը քսանչորս ժամ կը բանէր արտադրելով կամ վերարտադրելով ամերիկեան երազը:

– Ա՛խ այս լոյսերի հեքեաթը... Դու գիտե՞իր որ Թուրքիան խոշոր աշխատանք տարել է խափանելու ներգաղթը:

– Կը գարմանա՞ս: Ամէն պատճառ ունէր: Մեր սեւ բախտէն դէպքերը հացին իւղ քսեցին, ըսաւ Մասիս, որ տեղեակ էր Հայաստանի դժբախտութեանց:

Հայրը 1949-ի Յունիսին Ալթայ աքսորուածներէն էր: Հայաստան ցաւ յայտնեց որ ընկերաբանական եւ պատմական լուրջ ուսումնասիրութիւններ դեռ լոյս չեն տեսած այդ շրջանին մասին: Սովետի դիւանները դեռ չեն քրքրուած: Յուշեր կան, որոնցմէ ոմանք ռուսերէնէ ազատօրէն «վերցուած» կամ յարմարցուած կրկնութիւններ են: Ինք ծանօթ չէր հայ աքսորեալներուն թիւին, վայրին, կենսական վիճակագրական տուեալներուն:

– Հա, շարունակեց Հայաստան, ես շեղուեցի. հարցումդ տարբերութեան մասին էր, չէ՞: Ես համալսարանական ուսում ստացայ, մեքենական **ինժիներ** դառայ Նիկիտա

Մերկէելիչի փողով. դուն տնտեսագէտ եւ փաստաբան եղար աման-չաման լուալով: Խնդաց:

Հայաստան ամուսնացած էր հայաստանցի երիտասարդի մը հետ, որ Կարմիր Բանակին մէջ բարձրացած էր գնդապետի աստիճանին եւ մահացած Գանտահար, Աֆղանիստան, **մուճահէտինի** գնդակով: Մեծ յարգանքով եւ սիրով կը խօսէր կեսրոջ եւ կեսրայրին մասին, որ եղած էր պետական յայտնի դէմք մը:

Մասիս ուրախ էր որ առիթ ներկայացած էր զինք հետաքրքրող հարցումներուն պատասխան մը թերեւս առնելու քիչ թէ շատ իրազեկ աղբիւրէ մը: Յաճախ մտածած էր քառասունական թուականներու ներգաղթին մասին: Չէր գիտեր թէ ինչո՞ւ անցած-գացած նիւթ մը զինք կը հետաքրքրէր այդքան: Արդեօք անոր համար որ վաղ պատանութեան յիշատակները չէ՞ն ջնջուիր: Մազ մնացեր էր որ ինք ալ Փոպետային վրայ ըլլար Հայաստանի հետ: Անկախաբար անձնական ապրումներէ, զարմանալի կը գտնէր որ այդ շատ լուրջ նիւթը ախ-վախերու մէջ խեղդուած էր:

Հայաստան հիանալիօրէն համադրեց ներգաղթին նպատակներուն շուրջ տիրող կարծիքները: Ներգաղթը մէկ քարով քանի մը թռչուն կը զարնէր: Պաղ պատերազմին մէջ պատասխան մըն էր հակասովետ արշաւին, արիւնաքամ Հայաստանին բնակիչ եւ մարդոյժ կը հասցնէր, հայրենիք շէնցնել փափաքողներուն պատեհութիւն կ'ընծայէր եւ կարելիութիւն կը ստեղծէր սփիւռքի թշուառ զանգուածներուն ապագայ մը կերտելու իրենց եւ մանաւանդ իրենց զաւակներուն համար:

– Ներգաղթը առնչուած չէ՞ր Կարսի եւ Արտահանի պահանջին, հարցուց Մասիս:

– Անպայմա՛ն: Հայաստան նեղ պիտի գար աճած ժողովուրդին, ուրեմն տարածք...: Միրգ նաեւ մուրճ Կրեմլի ափի մէջ: Դա օրինաչափ է մեծերի հաշուարկներում...

Խրիմեանի արտասուքի շնորհիւ էլ Սալիզբըրին անկողին մտաւ Սուլթանի հետ... եւ արտասուքի տեղ հայի ծով արին հոսեց: Դու գիտես, չէ՞: Ամէն դէպքում ներգաղթը ազգային-պատմական մի խոշոր իրադարձութիւն էր, այժմեական եւ հեռանկարային, եզրակացուց Հայաստան:

– Կ’ընդունիմ, ըսաւ Մասիս, բայց չե՞ս կարծեր որ **փրո-փականտը** որոշ գաղութներու մէջ մոզական էր: Կը յիշե՞ս, հինգերորդ դասարանին մէջ յիսուն հոգի էինք... դուք գացիք, վեցերորդին տասներկու մնացինք:

– Այո՛ եւ գնացող երեսունութից երեսունը կէսօրուան ճաշը Աղքատախնամի սեղանէն կ’առնէին: Յիշո՞ւմ ես, օրիորդ Սէֆերեանը զանգակը ձեռին կը կանչէր. «Ձրիավարժներու շարքը ա՛յստեղ»: Հիմա ձրիավարժ բառը չես կարող գործածել, շատ վիրաւորական է, բայց էն ժամանակ այդպէս էր, շատ բաներ տանելի էին... բնական էին թւում:

Հայաստանի կեսրայրը լսած էր սրտաճմլիկ խնդրանքներ: Պետութիւնը որոշած էր երեսուն հազար հոգիի ներգաղթը, բայց 1945-ի կաթողիկոսական ընտրութեան առթիւ Յունիսին Հայաստան ժամանած սփիւռքի պատգամաւորները կ’աղաչէն, կը պաղատին—Բարձրացուցէք թիւը... կը մեռնինք կոր... քաղաքացիական կռիւներու մէջ բռնուած ենք Պաղեստին, Պարսկաստան, Ռումանիա, Պուլկարիա, Յունաստան... չոր հաց ուտենք... քարի վրայ պատկինք... փրկեցէք...: Եւ Հայաստան ընդունեց հարիւր հազար ներգաղթող, թերեւս շատ աւելի, երկարելով եւ բազմապատկելով հացի սպասողներու շարքերը:

– Աստուծոյ հետ ի՞նչպէս ես, խօսքը փոխելով հարցուց Մասիս:

– Լաւ: Հաւատում եմ Երրորդութեանը: Աղօթում եմ: Վաչիկս ի՞նչպէս ազատուեց: Սիրում եմ Հայ Եկեղեցին, յարգում եմ յարգելի հայ եկեղեցականը: Էտքան:

– Էջմիածին կ’այցելէի՞ր:

– Տօներին անպայման:

– Փորձա՞ծ ես հասկնալ մեր դասարանին պատէն կախուած նկարին «նահատակ» բառին իմաստը...

– Խորէն Մուրատբէկեան Կաթողիկոսին ակնարկում ես, չէ՞: Մեր գնալուց տաս տարի առաջ վախճանուել էր: Ժողովուրդը չէր խօսում: Սիրտ էլ չունէր խօսելու: Մեր ժամանակ հայրապետը Չէօրէքճեանն էր: Ասում էին շատ խելացի մարդ է, փրկել է Եկեղեցին: Պահն էլ էր նպաստել—Հայրենական Պատերազմ, Բարեգործական Միութեանը հետ օգնութեան կազմակերպում սփիւռքից, եւայլն:

Հայաստանի կարծիքով Մուրատբէկեան Կաթողիկոսին վախճանման պատմութիւնները կը ցուցադրէին փակ, միակուսակցական եւ հակակշռեալ ընկերութեան մը բոլոր վատ կողմերը: 65 տարեկան հայրապետը, որ զրկուած էր վանական եկամուտէ, չէր կրցած արգիլել Էջմիածնի կալուածներուն վրայ դրուած տուրքը եւ անգոր էր կասեցնելու իր հոգեւորականներուն աքսորը, բնական էր որ սրտի կաթուածով մահանար, ինչպէս վկայած էր դիագնոստիկան տեղեկագիրը: Այս իմաստով կաթողիկոսը նահատակ մըն էր: Բայց ո՞չ, ան անպայման խեղդամահ եղած էր... քանի որ արեան հետք չէր գտնուած: Մեր պատմութեան արգանդին նոյնատիպ երկուորեակն են լուրը եւ բանահիւսութիւնը...

– **Հայտէ**, ասէնք ճիշդ են, կաթողիկոսը սպաննուել է, բայց ինչպէ՞ս կարելի է ասել պետութեան կամ կոմկուսի հրամանով: Պէտք չէ՞ հարցնել դրանում ի՞նչ կը շահէր պետութիւնը կամ **պարտիան**, ի՞նչ կրնար ըլլալ շարժառիթը: Վանքի՞ն տիրանալ, գանձատո՞ւնը պարպել: Դրանից դիւրին ի՞նչ: Մի **դէկրետ** եւ պրծաւ: Ասէ-կօսէի սիրահար մեր ժողովուրդը...

Խօսքը չամբողջացուց երբ տեսաւ որ Վաչիկ եկած էր իրենց մօտ շուէտական Ապստլիւթ վոտքայի բաժակներով եւ խորովածի կտորներով:

– Տղաս, եկ, միացիր մեզի, քեռին թող մի քիչ քեզ ճանաչի: Նա ինչե՛ր ասես չարեց քեզ համար...

Շնորհալի տղայ մը ըլլալը յայտնի էր դէմքէն: Այրի մօր պատճառած հոգեկան սարսափելի տառապանքին եւ նիւթական աւերին ծանրութիւնը որոշապէս կը զգացնէր: Գիտէր որ յուսախաբ ըրած էր բոլորը, մանաւանդ ծերունի պապիկը, որ Երեւան կը մնար եւ որուն հետ մտերիմ եղած էր: Հայոց կենդանի ժամանակակից պատմութիւնն էր ան իրեն համար:

– Սա ուրախ պահ է, Վաչիկ, վատ մի զգար, ըսաւ մայրը նկատելով տղուն տխրութիւնը, ամէն ինչ լաւ կը լինի: Քո կարծիքը մեզ համար կարելոր է... Ինչո՞ւ ե՛ւ Հայաստանում ե՛ւ էստեղ սուտերով եւ ասէ-կօսէով սնւում ենք...

– Որովհետեւ մարդ ենք եւ «պարզապէս մեզ հայ են ասում»... պատասխանեց երիտասարդը մէջբերելով բանաստեղծին յայտնի տողը: Իմ կարծիքը նշանակութիւն չունի, պէտք չէ ունենայ... Խօսելու իրաւունք էլ չունենա:

– Ի՞նչ ես ասում, յանդիմանեց Հայաստանը: Այդպիսի խօսք չեմ ուզում լսել: Մի սխալ արեցիր, վերջացաւ: Դու մաթեմաթիկայի դոկտորական ես ստանալու... ազգը քեզից ակնկալիքներ ունի...

– Քանի մը տարի առաջ մեր հայրենիքը, ասում էին, անծայրածիր Սովետական Միութիւնն էր, հիմի աշխա՛րհն է: Որտեղ հաց, էստեղ հայրենիք, իսկ աշխարհի իր տաքուկ թելերում գրկում է աչքաբաց հային... Սուրճի բաժակների շուրջ ասէ-կօսէն, սուտը եւ ինքնագովութիւնը՝ հէ՛ջ:

– Իսկ թերթերո՞ւմ, գրքերո՞ւմ, երգերո՞ւմ, պաշտօնական գեկոյցներո՞ւմ... անհամբեր հարցուց Հայաստան:

– Էն ժամանակ կ'ունենաս հայութիւնից փախած հարիւր հազարաւոր Վաչիկներ... իմ ի՞նչ գործն էր մի Ուինսթըն, մի **վայքաունթի** աղջիկ, մի Ուինսթընի **անքըլ**... յիմա՛ր տղայ:

Մասիս, որ ուշադրութեամբ հետեւած էր Հայաստանին

եւ Վաչիկին խօսակցութեան, ուզեց գիտնալ Վաչիկին կարծիքը հայապահպանման ճիգերուն մասին: Պաշտօնական բեմերէ կը շեփորուէր դաստիարակչական քաղաքականութեան նոր ուղղութիւն մը, որ կը շեշտէր աշխարհաքաղաքացի սերունդներուն ինքնութեա՛ն պահպանումը:

– Ո՞վ կարող է դէմ լինել ինքնութեան պահպանումին, հարցուց Վաչիկ: Էտ **պրոքլեմը** մեր ազգի չափ հին է, բայց եթէ դրանով հասկանում են ճերմակ դրօշ պարգել, իբր հայերէն սովորեցնել, հայկական կրթութիւն հնարաւոր չէ, դա **կոնկրետ** մաս կազմում է ասէ-կօսէին: Հայ դպրոցների ուսանողները հայերէն չեն իմանում, հայերէն չեն սովորում, որովհետեւ ծնողները, դեկավար մարմինները չեն ուզում որ սովորեն... Թող իմ մամային թագուհի կարգեն հայ դպրոցներին, երկու տարի, տես թէ ինչպէս մեր տղերքը հայերէն կը սովորեն, հայագէտ կը դառնան...

Բոլորը քահ-քահ խնդացին: Գիշերուան ամենէն զուարթ պահն էր:

– Դէհ կենա՛ցո, Հայաստան... գաւաթը բարձրացուց Մասիս... Անպայման Վաչիկիդ **խերը** պիտի տեսնես:

– Քեռի, դուք շատ լաւ գիտէք, պարապ խօսքը կարող է լեցուն հետեւանքներ ունենալ, բոլորն էլ վատ: Մի արքեպիսկոպոս քարոզում ասում է, հոգ չէ, օտարի ամուսնացէք, բայց հայացրէք: Մի շատ կարելոր Միութեան պետը հրահանգել է մասնաճիւղերին կենտրոնին հետ անգլերէնով նամակցել, որովհետեւ անգլերէնը միջազգային լեզու է, ամէն մարդ հասկանում է:

Հայաստան յիշեց պարագան Օսմանեան խորհրդարանի հայ **մէպոսին**, որ ռուս զինուորի համազգեստով նկարուած էր՝ Թուրքիայէն Հայաստանը ազատելու յայտարարութեամբ: Մինչեւ այսօր այդ է ապացոյցը «դաւաճան» հայուն եւ արդարացումը... «վտանգուած» գօտիներէն Ապրիլ 24-ի տարագրութեան: Ատկէ 30 տարի ետք սփիւռքէն նախկին

հայ զօրավար մը իր «քաջերուն» հետ մտած էր Հիթլերի ծառայութեան մէջ... ռուսերուն ձեռքէն Հայաստանը ազատելու եւ Եւրոպայի հայերը փրկելու համար:

– Ինչու չէ, այն ատեն մենք ալ կ'երգէինք «Հիթլերական ազատ աշխարհ Հայաստան» Ֆոն Գարայանի ղեկավարութեամբ... Գարայանն ալ հայ է. մականունը «յան»ով կը վերջանայ...

Հեգնանքին ճիշդ թիրախը ինք ալ չէր գիտեր, բայց Հայաստան անայլայլ նայեցաւ Մասիսին: Մարդ կրնար յանդիմանութիւն կարդալ այդ նայուածքին մէջ: Ամէն հաւաքականութեան դժգոհութեան եւ անգիտութեան թաղարներուն մէջ կը բուսնին դիւրաբեկ ցօղուններ քէներու եւ թունաւոր խորհուրդներու: Հայութիւնը տարբեր պիտի չըլլար:

Կեռիսաչ թելկապով հայ մարդիկ ոտքի կ'ելլեն Կարմիր Բանակը կոնակէն զարնելու...: Մարդկութիւն եւ մշակոյթ կրակի տալու ելած լուսնօտը պիտի օգնէր հայութեան...: Մասիս յիշեց Խրիմի թաթարները: Գոնէ այս անգամ Աստուած չէր լքած իր նարեկախօս ժողովուրդը:

– Մի քիչ է ետ գնանք, ըսաւ Վաչիկ, լուրջութիւնը խզելով: Ղարաբաղցիները մերժել էին կռուել Էրզրումի ճակատամարտում եւ...

– Ինչո՞ւ, հարցուց Մասիս զարմացած:

– Փաշա, ասել էին Անդրանիկին, Թրքահայաստանը մեր հայրենիքը չէ, մենք տուն ենք գնում:

– Գացի՞ն:

– Տուն չհասան: Ճանապարհին թաթարները բոլորին կոտորել են մի կիրճում, Գորիսի մօտերքը:

Հայոց ժամանակակից պատկերազարդ պատմութիւնը ի՛նչ անմոռանալի էջեր արձանագրած էր...

– Կը ներես, քեռի, հիմի երիզը մի երեսուն տարով առաջ տանեմ, **Ֆաստ Ֆորվըրդ** ինչպէս ասում են: 1948 թուին,

Կահիրեում կայանում է մի հայկական գաղտնի համագումար, որի արձանագրութիւնը մութ ճամբէքով հասնում է Մոսկուա:

– Ֆարութի օրո՞վ ալ Չեկան ներկայ էր, ընդմիջեց Մասիս:

– Անվտանգութեան գործակալները ներկայ են ամէն տեղ, ամէն ժամանակ, ըսաւ Հայաստան:

– Համագումարին մասնակցել էր Հիտլերի նախկին հայ զօրավարը յատուկ առաքելութեամբ... Ժողովում ասուել էր որ հայ ժողովուրդը բոլշեիկեան լծից ազատուելու իր յոյսերը կապել էր էտ համագումարին...

– Այդ յիմար, այդ փքալից խօսքի դժբախտ զոհերից մէկը... շարունակէ՛, Վաչի՛կ, պատմի՛ր, պատմի՛ր որ քեռիդ իմանայ...

– Դրանից մի տարի անց տարաբախտների հետ մօրս հայրն էլ են քշում Ալթայի մարզ: Նրանք մարդկային սովորական տրտունջներ են ունեցել... պապիկս վերադարձել է 1956-ին: Տոկուն մարդ է եղել:

Մասիսի յօնքերը կռուեցան ճակատին ամպերուն տակ: Հանդարտելու ակնկալութեամբ վայրկեան մը վեր նայեցաւ:

– Ո՞ր շունը տուած էր հրամանը...

Աստղագարդ երկինքը պատասխան չունէր: Իրականութեան մէջ հարցումը իր հոգիի՛ն համար էր:

– **Պոլիտքիւրո՛ն**, պատասխանեց Վաչիկ... Աքսորը «օրինական» էր: **Պոլիտքիւրոյի** որոշումը կոչւում էր «Անդրկովկասում Պրոֆիլակտիկ Միջոցներ Ձեռնարկելու Մասին»:

Ժամը յառաջացած էր: Մասիս առաւօտեան 5-ին պէտք է LAX գտնուէր: Առանց զգացնելու որ տրամադրութիւնը քանդուած էր, համբուրուեցաւ Հայաստանի հետ եւ պատուիրեց Վաչիկին որ չվարանէր իրեն դիմելու որեւէ հարցի առնչութեամբ:

Պրոֆիլակտիկը լայն տեղ գրաւեց Մասիսին մտածում-

ներուն մէջ :

Պատեհ առիթներու կարելի՞ է չենթարկուիլ Ես-ին պահանջներուն երբ ամբարտակը՝ **պրոֆիլակտիկին** ձեռք նետել տուող վտանգին ուրուականն է միայն, որ կրնայ նկատուիլ կամ չնկատուիլ նախապաշարեալ ուղեղէն: Մասիս գիտէր որ պատասխան մը գտնելու ճիգը հաւանաբար արդիւնք պիտի չտար, բայց կարելի չէ ըսել որ ուրախ չէր այդ գիշերուան հանդիպումէն:

Անշուշտ ուրախ էր, նոյնիսկ շա՛տ ուրախ, որովհետեւ Վաչիկ անհաւատալի յայտնութիւն մը եղած էր իր իմացութեամբ, դատումներով, հոգիով: Ան Հայաստանի զաւակն էր, Հայաստա՛նն էր, իսկ Հայաստան կը յիշէր ոչ հեռաւոր անցեալը...

Յունիս 2007

Ֆորթ Լի, ՆՃ

Բ. ՄԱՍ

ՆՈՐԷՆ ԵԿԵՂԵՑԻ ԵՐԹԱԼ Կ՝ՈՒԶԵՄ



Եկեղեցի չեմ երթար, թէեւ հաւատքս նոյնն է ինչպէս երէկ, կաթիլ մը չէ պակսած եւ երբեմն կը բարձրանայ եռացող կաթի նման:

Այստեղ աղուոր փափաքներ կը վիժին երբ կարելի չ'ըլլար ճեղքել բարակ պատերուն պաշարման օղակը: Բարեբախտաբար դեռ պէտք չունիմ հարազատի, բարեկամի եւ ընկերոջ ծառայութեան, բարեացակամութեան կամ քմահաճոյքին միջնաբերդէն դուրս գալու համար:

Եկեղեցւոյ գաւիթին մէջ արծաթեայ ափսէն զիս կ'ուրախացնէ պատանիի պէս, որովհետեւ տակաւին ի վիճակի եմ թղթադրամ մը սահեցնելու մտած եւ ելած պահուս, եւ ան ինծի հեռուներէն, շա՛տ հեռուներէն կը բերէ քաղցրութիւնը նախաքրիստոնէական մեր ոստանին ամենէն փարթամօրէն փափկասուն տիկնանց, որոնք շէն էին եւ առաւել կը շէննային երբ կը կանչէին ժպտադէմ—պայծա՛ռ մնաք:

Բացօթեայ կառավայրին մէջ պսպղուն թանկագին ինքնաշարժները եւ ազգակիցներուս տօնական արդուզարդը զիս չեն անհանգստացներ: Եկեղեցի մուտքս հիմնուած է մերկ մարմնիս վրայ դրոշմուած Ս. Միւռնին իրաւունքով, զոր տարուան բոլոր օրերուն ծովանոյշ ծննդավայրիս Ս. Պօղոս-Պետրոս եկեղեցւոյ նստարաններուն վրայ, պէյերուն եւ փաշաներուն ուրուականին քով, ցնցոտիներով կ'արժեցնէին ծոծրակին վերքերը կանաչ տերեւով ծածկած Տոքթորն ու յարածամ արագ-արագ «անոյշ ապուր» մրթմրթացող Բենիամինը:

Գանգատ չունիմ—երբեք չեմ ունեցած—արարողու-

թեանց տետողութենէն: Ես չեմ կրնար կարճ եւ երկար ածականներով որակել պատարագի մատուցումը, խորհուրդի մը կամ ժամերգութեան մը կատարումը կամ քարոզ մը, որովհետեւ կարճը համազօր եւ հոմանիշ չէ լաւի, ներդաշնակի, քաղցրահունչի եւ հոգեզմայլի, ոչ ալ երկարը՝ վատի, խառնափնդորի, ժխորի եւ խորշելիի: Եւ ազատ եմ վերջապէս երեսս խաչակնքելով տաճարէն դուրս գալու երբ որ ուզեմ:

Բայց եկեղեցի չեմ երթար:

Հայ փնտռելու, հայ գտնելու եւ հայու հետ հայերէն խօսելու կարօտ չունիմ—չեմ ունեցած—բարեբախտաբար: Շատ կանուխէն կեանքս կապած եմ հայութեան եւ բարեկամներս ու ընկերներս ընտրած ազգակիցներէս: Օրուան ժամերուն մեծագոյն մասը հայերէն կը խօսիմ, հայերէն կը կարդամ, հայերէն կը գրեմ, հայերէն բառ ու բանով կը լիանամ եւ հետեւաբար պէտք չունիմ նախնեաց տաղեր մտիկ ընելու կամ հայրենակիցներու հետ շփուելու համար եկեղեցի երթալու:

Բայց պէտք է երթամ, կ'ուզեմ երթալ ո՛չ թէ աղօթելու համար, որովհետեւ միջնաբերդիս մէջ կ'աղօթեմ առանձինն, երբեմն նոյնիսկ օրը քանի մը անգամ, մեքենաբար, անտեղեակ Իր ներկայութեան, որովհետեւ Ան ինծի հետ չի խօսիր: Աղօթքս խօսակցութիւն չէ Աստուծոյ հետ, այլ գրեթէ ամէն մարդու պէս մէկ ուղղութեամբ աղերս մըն է Անոր, որ Իր բուն ըսելիքը վերապահած է ուրիշ օրուան մը, թէւ պնդողներ կան որ Ան կը խօսի իրենց հետ հանապազ:

Պէ՛տք է երթամ, բայց ամէն անգամ որ ոտքի ելլեմ, ծովափը լուորորդներուն վտանգ ազդարարող սեւ դրօշը միտքս կուգայ: Հոգիս պէտք ունի խաղաղութեան, զոր միայն Ան կրնայ տալ երբ զգամ որ քովս է: Իսկ Ան, շատ տարիներ առաջ սորվեցուցած են ինծի, Ինքզինք կը զգացնէ—

զգացուցած է—միմիայն Իր կերտած տաճարին մէջ եւ Իրեն նման խորհրդաւոր, Իրեն նման անհասկնալի, Իրեն նման հեռու հեռաստանէն եւ Բարձրաւանդակին անմատոյց բարձունքներուն երկինքէն ծորած լեզուին սքանչացումին մէջ միայն:

Կիրակիէ կիրակի, պսակէ պսակ, մկրտութենէ մկրտութիւն, թաղումէ թաղում եկեղեցիս կը վերածուի աշխարհի էն զարդարուն, էն ընդարձակ եւ էն շքեղ թարգմանութեան գրասենեակին: Գրաբար չե՞մ հասկնար— Հովիւը աշխարհաբար կ'արտասանէ. աշխարհաբար չե՞մ հասկնար—հովիւը կամ սարկաւազը անգլերէն կը կարդայ եւ ապա անպայման կը փութայ անգլերէնով յայտարարել մեղքեր, իմս ըլլան կամ ոչ:

Չեմ հասկնար ինչո՞ւ Ամերիկայի մէկ ափէն միւսը եպիսկոպոս, վարդապետ, քահանայ, սարկաւազ, տիրացու, թեմական եւ ծխական խորհուրդներ իրար անցած են որ ես հասկնամ: Միտալ չհասկցուիմ: Հասկցողը չեմ: Հասկնալ չուզող մէկն ալ չեմ: Բայց հասկնալ ի՞նչ: Հասկցնել ուզուածը վարձակալական պայմանագրութիւն չէ, կարճ պատմուածք չէ, բանաստեղծութիւն չէ, ճառ կամ ոճիրի մը լուրը չէ: Կարելի՞ է բռները մէկ լեզուէն ուրիշի մը վերածելով հասկնալ գԱստուած, Աստուածորդին եւ Ս. Հոգին:

Ոչ մէկ բառով, ոչ մէկ լեզուով մարդկային էակը կրնայ հասկնալ, հասկցնել կամ բացատրել մեծ եւ սքանչելի Խորհուրդը, անհաս եւ անսկիզբ խորին Խորհուրդը: ԶԱյն կարելի է միմիայն ընդունիլ, ըմբռնել եւ զգալ հաւատքով, յայտարարել Անոր գոյութիւնը հաւատքով եւ Անոր մասին խօսիլ հաւատքով:

Իմ եկեղեցոյս մէջ ես պէտք չունիմ լսելու, Աւետարանի ընթերցումով, **«Ի սկզբանէ էր Բանն եւ Բանն էր առ Աստուած եւ Աստուած էր Բանն»** նախադասութեան հայերէն

աշխարհաբարը՝ «Բանը սկիզբն էր, Բանը Աստուծոյ քով էր եւ Աստուած Բան էր», կամ անգլերէնը՝ «In the beginning was the Word and the Word was with God and the Word was God.»

Ո՞վ կրնայ առանց խղճահարութեան պնդել որ, դարձեալ Յովհաննու Աւետարանէն, «Եթէ ցորենի հատիկը հողին մէջ իյնալով չմեռնի, միայն ինքը կը մնայ, իսկ եթէ մեռնի, շատ արդիւնք կուտայ» խօսքին հանդիսաւոր եւ եղանակաւորեալ ընթերցումը կը բանայ իր հոգւոյն դռները առ Աստուած, մինչ անգլերէնը՝ «unless a grain of wheat falls into the earth and dies, it remains alone; but if it dies, it bears much fruit.» զինք երկինք կը հանէ, իսկ հարազատը՝ **«Եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի, ինքն միայն կայ. ապա եթէ մեռանիցի, բազում արդիւնս առնէ»**, զինք տարտարոս կը նետէ:

Իմ եկեղեցիս միմիայն ի՛ր լեզուով միտքս ու հոգիս կը բանայ ամենասուրբ Երրորդութեան: Այն գեղանոյշ լեզուով, որ իմ ծնողացս չէր, զոր անոնք չէին հասկնար երբեք, որ հինգերորդ դարու Հայունն ալ չէր, զոր ան չէր հասկնար բնաւ, բայց զոր Սահակ-Մեսրոպեան հանճարը յօրինեց կատարելապէս, Կատարեալին վայել, առաջին լուսաւորիչներուն առաքելական գործունէութենէն չորս եւ Վաղարշապատի մէջ Աստուծոյ յայտնութենէն մէկ դար ետք, որպէսզի ան իրը ընէր զԱյն ու զատորոշուէր իր օտար հաւատակիցներէն եւ սպառազէն քրիստոնէութեան հարուածներուն դիմաց ունենար ի՛ր եկեղեցին, տունը իր հոգւոյն, դէմքը իր էութեան, աստղը իր ճանապարհին:

Ի՞նչ փոխուած է հիմա 1600 տարի ետք: Հիմնապէս ոչինչ, արմատապէս շա՛տ: Տիեզերական գիւղը ի՛նչ իմաստներ կը հագցնէ Յիսուսի վարդապետութեան եւ կը խորտակէ, կը գալարէ, կը ճզմէ, կը քամէ, կը հաւասարեցնէ, կը կլանէ, կ'անհետացնէ, մինչ չկան Սահակ-Մեսրոպեան հաւատք եւ հանճար: Անոնք մորթուած են գոհացնելու համար պարար-

տութեան չաստուածը, որ առատապէս օրհնեց Մեծ Երաշ-տին յաջորդած վերջին 50 տարիները:

Եկեղեցւոյ մէջ լեզուական հասկնալիութեան, այժմեա-կանութեան, հոգի փրկելու եւ փրկեալներու թիւը բարձ-րացնելու արդարացումով բոլոր նորարարութիւնները եւ նորութեան դիւային ձգտումները, որոնց գլուխ-գործոցն է Ս. Պատարագին անգլերէն լեզուով մատուցումը, կը գոհացնեն միայն պարարտանալու կիրքը: Կեղծ են, սուտ են եւ աղետա-բեր: **«Զի հաւատովք գնամք եւ ոչ կարծեօք»:**(Բ. Կորնթ. Ե.7):

Եկեղեցիս, ներսը, նախանձելիօրէն բարեկարգ է հիմա իր ուսումնական եւ պարկեշտ հովիւով, վայելուչ յարդա-րանքով, դաշն ու կանոնաւոր արարողութեամբ, բացի լեզուի կարկտանէն: Բարեկարգ չէ իր պատերէն դուրս, ուր ջրտուքի կը սպասէ անծայրածիր խոպան դաշտը ծառայութեան եւ օգնութեան:

Յովիացած Ամերիկայի մէջ, ամերիկահայ շփացած տար-րերու վարկպարագի տեսութեանց եւ անշնորհք, գուցէ նաեւ նենգ ճնշումներուն դիմաց, եկեղեցական նուիրապետու-թեան պաշտպանութեան զէնքը պիտի ըլլար յարձակողա-բար վկայակոչել Սահակ-Մեսրոպեան հրաշքը, զայն յայտարարել ամէն առթիւ, ուսուցանել եւ քարոզել աներկիւղ իր բո՛ւն իմաստով: Եւ անցնիլ անդին արարողական պաշտօնէն, հոգի շահելու համար հոգւով ծառայել, սրտով տալ, հաւատքով հարստանալ:

Ինչպէս որ եկեղեցւոյ մէջ Խաչն ու Աւետարանը գեղա-հիւս ժանեակով կը բարձրացուին եւ կը մօտեցուին մեր շրթներուն համբուրուելու ահիւ եւ դողութեամբ, որովհետեւ անոնք նշաններն են անբաւելի Խորհուրդին, **«որ ՚ի վե՛ր է քան զամենայն միտս եւ զբանս»**, միւս նշանը, պահապան եւ կենարար լեզուն ալ, պէտք է մատուցուի էն նրբահիւս ժանեակով, առանց թելակարուած քուրջերու, զի՛նք արժա-

նաւորագոյն ձեւով փառաւորելու եւ հայու հոգին անփորձ եւ
անխռով ապրեցնելու համար:

Նորէն եկեղեցի երթալ կ'ուզեմ:

Յունուար 2004

Տորթ Լի, ՆՃ

ՈԳԻՆ ԱԶԳԻՆ

Ի

նչ է ոգին, ո՞ր է ոգին, ազգի՛ն ոգին:

Ներե՛լ ինձի, Վահան անպարագրելի, որ աչքերս ամպեր խուզարկող մէկ հատիկդ չեն: Ազգին ոգին ինձի չի յայտնուիր ամպի նման ինչպէս հայու հոգին քեզի երեւցած էր ու գրաւած երեսն ամբողջ երկնքին:

Որքան հեռացանք արիւնլուայ ձորերէն եւ անապատին դժոխքէն մարմնով, հոգւով եւ մտածումով, այնքան իրապաշտութիւնը մեզ վարձատրեց անհատապէս: Այնուհետեւ սուտ, սխալ եւ խաբող տրամաբանութեան մը ուժով թոյլ տուինք որ ան թափի ազգին բոլոր հիմնարկներուն մէջ, ամենէն մեծէն ամենէն փոքրը, ամենէն սուրբէն ամենէն անսուրբը, ամենէն կարեւորէն ամենէն անկարեւորը:

Մինչեւ այդ ատեն յոյսերս եւ յոյզերս կը սաւառնէին թռչունի թւերով: 1975 տարուան Ապրիլի երկրորդ կիսուն, երբ կը շարունակուէին թրքական նորագոյն ոճրին ոճրային արդարացումները, հանդիպման մը ընթացքին, վաստակաւոր կրթական մշակը հայակրթութեան ողբերգութիւնը փռեց առջեւ:

Ան, տնօրէնը դպրոցին, ուր դուն տարի մը լծուեցար ուսուցիչ պատրաստելու գործին, իրիկունը, հոգաբարձական ժողովէն ետք, զիս հիւրասիրեց անհրապոյր ճաշարան

մը: Ընդունելութիւնը—այդ քաղաքին համար ոչ-սովորական—շուտով մատնեց նպատակը:

– Չեմ գիտեր, թէ ի՛նչ է ազգային ոգի ըսուածը, աչքերուս նայելով խօսեցաւ հիւրընկալս: Կրնայի՞ք ինծի բացատրել:

Հարցումը ակադեմական չէր: Ժողովականներու ներկայութեան պահանջած էի մարդավարի հայերէն սորվեցնել եւ ազգային ոգի ջամբել: Մոխրամանը քանի մը անգամ գամեցի նորավառ սիկարէթովս եւ դիտեցի դէմքը:

– Գերսամին ալ նոյն հարցումը ուղղած եմ, աւելցուց ան, տեսնելով որ ե՛ս վար իջած էի երկնքէն ու դարձած... մառախուղ:

– Ազգային ոգին ազգի՛ն ոգին է, ըսի: Դուք տարի մըն ալ մնացէք...

* * *

Մեծ Եղեռնի վերապրողներէն ա՛լ մարդ չէ մնացած: Անոնք ալ պիտի չճանչնային ինքնութեան թափօրականները, իրենց ծոռները: Հազարներ կը քալեն ընդարձակ պողոտաներէն: Ես թառած եմ մշտադալարի մը վրայ եւ վերէն, հեռուէն, շատ հեռուէն կը դիտեմ զիրենք: Առջեւէն կը քալէ անուշիկ աղջիկ մը. ճակտին կնճիռ չկայ. յօնքերը չէ պոստած: Կը ժպտի նոյնիսկ: Կարծեմ կը ճանչնամ զինք: Ա՞ն է արդեօք: Այո՛, ա՛ն է: Պատմեմ:

Դալարը իր քոյրերուն եւ զարմուհիներուն նման կը պաշտէր Միման: Միման միայն լսած էր Զէյթունի մասին Երուսաղէմի վանքին Մեծ Բակին մէջ: Թէեւ ամուսինը կը դժկամակէր հրաժարելու կեսարացիի անձնագրէն, Միման երկու գաւակներուն եւ հինգ թոռներուն Զէյթունի հպատակութիւն շնորհած էր եւ օր չէր անցներ որ չպատգամէր մէկուն կամ միւսին.

- Հայերէն խօսէ, որովհետեւ մենք հայ ենք:
- Թուրքերը մեզ ջարդեցին, որովհետեւ մենք հայ էինք:
- Երբ անգլերէն խօսիք, թուրքը կ'ուրախանայ: Կ'ուզէ՞ք

ուրախացնել թուրքը:

Ամենէն անուշը հինգ աղջնակներուն միաբերան պատասխանը կ'ըլլար—Ո՛ՂՈ՛ՂՈ՛ՂՈ՛Ղ:

Օր մըն ալ Դալար հարցաքննութեան արժոյթին նստեցուց... իր պաշտելին:

- Մի՛մա, ո՞վ թուրքերուն ըսաւ որ հայերուն ջարդէն:

Ի՞նչ պատասխան կուտայիր դուն հինգ տարեկան Դալարին, Վահա՛ն հայութեան:

Վարը, թափօրին առաջնորդը Դալարն է:

Շարունակեմ:

Հայրը գոհ էր զակին կրթութեան ընթացքէն: Հայ դպրոց, դպիր, Ճրագալոյցին «Ընթերցուածս ի Դանիէլէ Մարգա՛րէ՛է... Ո՛ջի՛նչ է՛ պիտո՛յ...»: Գոց զիտէր կենսագրութիւնը հայ նշանաւոր քանաստեղծներուն:—Ծնած է Պոլիս, մեռած՝ թոքախտէ...:

Տասը տարեկանին դրացի թուխ բժշկուհին, որ երկու աղջիկ ունէր եւ շատ կը փափաքէր մանչ զաւակ մը ունենալ, բայց չէր կրնար, կէս-կատակ, կէս-շիտակ առաջարկած էր զինք որդեգրել:

- Ես հայ եմ, ըսած էր տղեկը, ուրիշ բան չեմ կրնար ըլլալ:

Երիտասարդ, ազնիւ բժիշկ մը եղած էր ան: Իրեն համար մեծագոյն բուժողը ի՛ր Յիսուսն էր: Բայց քիչ-քիչ իր հայկականութեան ջերմաչափը ինկաւ: Ինչո՞ւ: Ե՞րբ ինկաւ—Յիսուսը «գտնելէ» ե՞տք, թէ առաջ:

Դիրք բռնած եմ նոյն մշտադալարին վրայ եւ կը դիտեմ վերէն, շատ հեռուէն: Հասակին եւ համբաւին պատկա-

ռանքով, զոր կը շեշտէ մասամբ ճաղատ սպիտակահեր գլուխը, թափօրին մէջ է ան: Նախորդ գիշեր հակած էր հայերէն լեզու եւ հայ մշակոյթ ուսուցանելու կոչուած կեդրոնի մը շինութեան նախագծին վրայ: Ժամանակը եկած էր տարիներ առաջ **պապային** տուած խոստումը սրտէն փոխադրելու հողին ու միջոցին:

Տարբեր է պատմութիւնը Հայկ-Արամին:

Միջերկրականի եզերքը ծնած, ծագումով դարաբաղցի հարուստ հօր մը յարկին տակ, մանկութեան պահանջած էր, ուրկէ՛ ուր... Հայաստանի բանալին: Հօր խնդրանքով Աւետիք Իսահակեան «զայն» սիրով դրկած էր իրեն երկտողով մը: Հայկը, որ ծնած օրէն թօթափած էր անուան կէսը, բանալին բերնին մէջ պահած էր գուրգուրանքով, բայց չէր կրնար Գիրին դուռը անով բանալ, հակառակ որ յաճախած էր ծննդավայրին յայտնի հայկական վարժարանը:

Ճիշդ քսան տարի առաջ, իմաստութեան եւ փորձառութեան թագակիր մը, ստամոքսին ցաւը յուսաց բուժել Յիմարութեան համար դառնալով Տրովադայի Ձին: Ինչպէս կը սպասուէր, պորտաբոյծները հնչեցուցին հազար շեփոր: Հայկը փախաւ Բարիքի անդէն, զոր կը մշակէր սրտեռանդն, եւ ինքզինք կախեց... Փանջօ Վիյայի կեռ պէխէն: Կը յիշե՞ս, Վահան հայկական, եօթը տասնամեակ առաջ դուն ալ հլու-հնազանդ ապաստանած էիր Ընկեր Պօղոսին սիկարէթի կրպակը, որպէսզի ջիղերդ հանգչեցնէիր ծուխով՝ մինչ ժողովը բացակայութեանդ կ'որոշէր ճակատագիրդ...

Յէխը չի՞ կրնար աղտոտել Հայու Հոգին: Անշուշտ, անշո՛ւշտ չի կրնար—ե՛ս ալ կ'ըսեմ—եթէ միայն Հայու Հոգին դուրս չգայ Ազգին Ոգիին վեհապետական տարածքէն կամ չարտօնէ անոր սահմաններուն բռնաբարումը:

Արուեստագէտ Հայկը գծեց կազմակերպ Բարիքին Հարիրամեակի խորհրդանշանը: Անով զարդարեց բոլոր պաշտօնաթուղթերը, բոլոր յայտարարութիւնները: Հարիր թիւը գիւտ մըն է. երկրորդ զերոն կ'իսուած, այսինքն Բաց՝ գալիք տարիներուն, տասնամեակներուն, կեանքի՛ն առջեւ: Եւ բոլոր գրութեանց մէջ էն առաջ Հայերէն անունը: Ո՛չ միայն Հայերէն անուան սկզբնատառերը էն առաջ, բայց եւ աւելի մեծ քան միւսը, օտարերէնը: Ի՛նչ արդար եւ երկիւղած յարգանք Բարիքի Անուան, Հայոց Լեզուին, 16 դար գիր-գրականութիւն ունեցող Հայոց Ազգին:

Առիթ ունեցա՞ծ էիր տեսնելու Հայոց Քրիստոնէութեան Դարձի 1700-ամեակին առթիւ Նիւ Եորքի Առաջնորդարանին պատրաստած խորհրդանշանը եւ նոյն խորհրդանշանին պաստառները տաճարէն ներս եւ դուրս: Մեսրոպէն մէկ հատիկ գիր չկար: Հայկական Եկեղեցւոյ զանգակները Ամերիկայի մէջ բոմբիւն չեն այլեւս եւ երգը միշտ յաղթութիւն չէ հիմա ազգին համար:

* * *

Վարը կը շարժի թափօրը, մեր ինքնութիւնը կը քալէ պողոտաներէն: Պաստառներու ալիքներ կը թաւալին շարք առ շարք Մեսրոպին, Կոմիտասին, Անդրանիկին, քու եւ միւսներուն նկարներով: Լուսաւորչիւնը չեմ տեսներ:

Հոս Հայկ-Արամը մշտադալարին վրայ տեղ գրաւած է մօտս: Հազարնե՛ր, հազարնե՛ր անաղմուկ եւ հանդարտօրէն հաւաքուած են դալարագեղ բլուրին շուրջ: Ծանօթներ կը փնտռեմ, բայց բազմութեան վերեւ ծփացող պսակներուն լոյսը թոյլ չի տար որ տեսնեմ դէմքերուն լրութիւնը: **Պապան** կը ճանչնամ ձայնէն: Կարծեմ ճառ կը խօսէր: Բարեբախտաբար կրցանք լսել վերջաբանը.

Զա՛րկ, Կովկա՛ս, ամերակեալ ու արցունքոտ
Հայաստանին աչքերը քեզի կը նային.
Զա՛րկ, սա անարգ ճակատագիրը ջախջախելու
եւ Չարիքը ըմբերանելու համար,
Զա՛րկ, որովհետեւ ամէն Յոյս զՔեզ կը յուսայ
եւ ամէն Ապագայ զՔեզ կը պաղատի...

Սիւսանթոն չյայտնուեցաւ, բայց պայթեցաւ լուսակիր-
ներուն լռութիւնը...

Սիւսան իենթեցած է ուրախութենէն:

Ապրիլ 2006
Ֆորթ Լի, ՆՃ

Հեղինակին հասցեն՝

M. Haigentz

1518 11th Street

Fort Lee, NJ 07024

USA

Գին 10 Տոլար

(Առաւել՝ առաքման ծախք)

Ստանալու համար դիմել՝

Mayreni Publishing

P.O. Box 5881

Monterey, CA 93944

